

ԾՐԱԳԻՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈԽԼՏՈՒԹՈՅԻ

V—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ — 1926

29 JAN 2018

ՀԱՅՀ ԼԱՒԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴական Կռմիսարիատ

**ԵՐԱԳԻՐ
ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ**

ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ V-X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1936

Պատ. Խմբագիր՝ Հ. Փառադամեյսն
Տեխ. Խմբագիր՝ Գ. Զ Ե Բ Ա Բ
Արքագրիչներ՝ Հ. Դ Ո Լ Ո Ւ Խ Ա Ն Յ Ա Ն և Հ. Մ Ա Ն Ո Ւ Կ Յ Ա Ն

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

Ֆիզիկական կուլտուրան միջնակարգ դպրոցի ուսումնա-
վաստիսարակչական աշխատանքի բաղկացուցիչ մասն և և նպա-
տակ ունի, ընդհանուր կրթության և աշխատանքային ուսման
հետ միասին, նպաստել աշակերտներին պատրաստելու սոցիա-
լիստական աշխատանքին և ԽՍՀՄ պաշտպանությանը:

Վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրան կառուցված է ՊԱՊ-ի այն միասնական սիստեմի հիման վրա, վորը 13—14 տարեկան յերեխանների համար արտահայտված և I աստիճանի յեղիր պատրաստ աշխատանքի և յերկրի սպազմանության (ՅԵՊԱՊ) կոմպլեքսով, 15—16 տարեկանների համար՝ II աստիճանի ՅԵՊԱՊ-ի կոմպլեքսով և 17—18 տարեկանների համար՝ առաջին աստիճանի ՊԱՊ-ի կոմպլեքսով:

F U S S P U C U

Միջնակարգ դպրոցի Փեղիկական կուտուրայի հիմնական խողիքներն են՝

ա) ապահովել աճող որդանիզմի նորմալ զարգացումն ու ձեւվավորումը և աշակերտների ամրապնդումն ու կոփումը.

բ) կատարելագործել դործադրական շարժիչ ունակությունները և տիրապետել սպորտի տեխնիկային.

գ) Նպաստել՝ ակտիվություն, վճռականություն, համարձակություն, համարձակություն, տոկունություն, համառություն, ճարպկություն, արագ կողմնորոշվելու ընդունակություն դաստիարակելուն, իրութերի ճիշտ հաշվառում կատարելուն:

Հրատարակ. 3823, Գլավլիտի լիտողը Ա.—1126, Պատկեր 1000
չանձնված և տրտագրության 8 ողոտոսի 1936 թ.
Սարքագրամատ և տպագրելու 21 ոգոսոտոսի 1936 թ.

Գետհրատի տպարան, Ցերեվան, 2-րդ Գնունի, 4

դ) նողաստել՝ կարգապահություն, ընկերական համերաշ-
խություն, կոլեկտիվիզմ, հանրային պարտականություն և
պարտքի դիտակցություն դաստիարակելուն.

Ե) դաստիարակել Փիղկուլտ-կազմակերպական և սանիտա-
րական-սոսողապահական ունակություններ.

Ղ) Հաղորդել՝ Փիղկուլտուրայի և սպորտի բնագավառում
աշակերտներին տեսական դիտելիքներ:

Այս հիմնական խնդիրների համեմատ՝ միջնակարգ դպրոցի
Փիղիկական կուլտուրայի աշխատանքն իրականացվում է հետե-
րական միջոցառումներով.

1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Ֆիղիկական վարժությունների և Փիղկուլտուրայի ու սպոր-
տի տեսության պարագմունքների դասեր:

2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՐՐԵՐԸ ՈՒՍՄԱՆ ՈՐՎԱ ՌԵԺԻՄՈՒՄ

ա) Ֆիղիկական կուլտուրայի տարրերը (մարմնամարզու-
թյուն մինչ պարագմունքները, Փիղկուլտուրութե, ընդմիջումների
ժամանակ Փիղիկական կուլտուրայի միջոցառումներ) աշակերտ-
ների ուսումնադաստիարակչական աշխատանքի առանձին բնա-
դավառներում.

բ) մասնակցություն դպրոցի առողջապահական վիճակը բա-
րելավելու միջոցառումներին:

3. ԻՆՔՆԵԴՐԸ ԱՇԽԱՏԱՆՔ

ա) Ֆիղիկական կուլտուրայի խմբակի աշխատանքն առանձին
սպորտ սեկցիաներում.

բ) սպորտ-մասսայական միջոցառումներ՝ խաղեր, ուազմա-
կանացքած յերթեր, դահուկային արշավներ, սահարան հաճա-
խելը, սպորտ յելույթներ, տոնակատարություններ, մրցակցու-
թյուններ, պարտակիսադաներ, չաշկա-չախմատային տուրնիր-
ներ:

4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ա) Աշակերտների բազմակողմանի Փիղկուլտ պատրաստակա-
նության ստուգումներ՝ նորմատիվ ցուցանիշների հանձնումը և

Պուլ աստիճանի ՅԵՊԱՊ-ի ու առաջին աստիճանի ՊԱՊ-ի (նա-
յած աշակերտների հասակին) նորմաների հանձնումը.
բ) ուսման և սպորտ աշխատանքի բժշկական-մանկավարժա-
կան մշտական վերահսկողություն և ինքնավերահսկողություն:

ԾՐԱԳԻՐ

ՀԻՑԳԵՐՈՐԴ գասարան

Ա. ՀՆԴՀԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորմատիվ ցուցանիշ. I աստիճանի ՅԵՊԱՊ-ի ազատ շար-
ժումների ճիշտ կատարում:

1. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ
ԱՌԱՆՁԻՆ ՄԿԱՆՁՅԻՆ ԽՄԲԵՐԸ ՅԵՎ ԶԱՐԳԱՅՆՈՒՄ ԵՆ
ՈՒԺՆ ՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Շարժում՝ ուղիղ և ծալված թևերով:

2) Շրջանաձև շարժումներ՝ թևերով:

3) Վարժություններ յերկուսով՝ 2—3 կիլոգրամ ծանրու-
թյան մեղքով նետումով (նետումներ ցածրից, գլխի յետելից
և կլծքից):

4) Մեղքովների խմբական հանձնում և նետում՝ շրջանում,
տողաններում և հատաշյումում:

5) Յերեսնիվայր, ձեռքերով հենված շլեղական նստարանին՝
ծալել և ուղղել ձեռքերը:

6) Թևերը ծալել (ձկվել)՝ խառը կախի մեջ:

7) Կքանիխտ՝ թևերի շարժումով:

8) Թևերի շարժումով ծնկել (չոքել մեկ վոտքի վրա)՝ վոտ-
քը յետ տանելով, առաջ քայլ անելով:

9) Արտանկում դեպի կողմ (աջ, ձախ), առաջ:

10) Մարմինը թեքել կողմ՝ ծնկած և մյուս վոտքը դեպի
կողմը մեկնած դրությամբ:

11) Մարմինն առաջ և յետ թեքել՝ մեկ վոտքով հենված
շլեղական պատի ձողին, վորը դանկում և պարապողի ծնկից վո-
քարձր:

12) Իրանի շրջանաձև շարժումներ :

13) Արտածալ շվեդական պատի մոտ :

14) Մեջքին պառկած վեր բարձրացնել վոտքերը (աւղիղ կծկած) :

15) Շտկած մարմինը բարձրացնել՝ մեջքի վրա պառկած դրությունից (վոտքերն ամրացված են) :

16) Թեերի ու վոտքերի թափով կատարվող շարժումներ :

17) Մարմինը դեպի կողքերը թեքել՝ լրացուցիչ ճռճռմներով :

18) Գլուխկոնծի :

Ծանրություն.—Մի շարք վարժություններ կարելի կատարել մարզավայրով :

II. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԴԱՆՆԵՐՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1) Վոստյուններ զանազան ուղղություններով :

2) Վաղը տեղում և տեղից՝ ծնկները վեր բարձրացնելով :

3) Վաղը միջակ տեմպով՝ մինչև մեկ րոպե տեղությամբ :

4) Վոստյուններ կարճ ցատկապարանով :

III. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՆՎԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒՆ ՅԵՎ ԻՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒՆ

1) Զանազան ծանրության և ծալալի գնդակներ և մեղքուներ հանձնել ու իրար նետել :

2) Գնդակ նետել ու բռնել՝ քայլելիս և վաղելիս :

3) Վարժություններ յերկուսով՝ յերկու գնդակով :

4) Շարժումների կոմբինացիաներ բաղկացած 4 տարրերից :

5) Շարժումներ հանկարծակի հրամանով (կանգ առ գնալիս, շարժում դեպի հակառակ կողմը) :

6) Քայլքի, վաղքի, տեղում և տեղից վոստյունների հերթափոխություն՝ փոխելով շարժումների արագությունը յերաժշտության և հաշվի տակ :

Բ. ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՅԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Գ Ա Յ Լ Ք

Հիմնական նյութ՝ քայլք հատասյունով, գուգասյունով, քառասյունով՝ 100-ից մինչև 400 մ. տարածության վրա, մարմինը ճիշտ պահելով, թեերը ճիշտ շարժելով. նույնը՝ քայլքը մեծացնելով և հացնելով՝ 60—75 սմ :

Գ Ա Յ Զ Ք

Նորմատիվ ցուցանիշ՝ տղաները՝ 50 մ.—10 վայրկյանում, աղջիկները՝ 50 մ.—12 վայրկ. (ցածր ստարտից). ՅԵՊԱՊ—տղաները՝ 60 մ.—9 վ., աղջիկները՝ 60 մ.—10 վայրկյանում :

Հիմնական նյութ՝ արագ վաղք մինչև 60 մ. ծանրութացում ցածր ստարտի, արագ վաղքի և ֆինիչի մոտ 10—20—30 մ., նետման տեխնիկային, 3 րոպե տեղողությամբ մեղմ վաղք, 40 և 50 մ. տարածությամբ հանդիպական վաղք՝ եստաֆետի հանձնումով :

Յ Ա Տ Կ Ո Ւ Մ Ն Ե Բ Ր

Նորմատիվ ցուցանիշ՝ բարձրություն վաղքով՝ տղաները—85 սմ, աղջիկները—80 սմ, յերկարություն վաղքով՝ տղաները՝ 2 մ. 80 սմ, աղջիկները՝ 2 մ. 40 սմ. (ՅԵՊԱՊ. բարձրություն վաղքով՝ տղաները՝ 1 մ. 10 սմ., աղջիկները՝ 95 սմ., յերկարություն վաղքով՝ տղաները՝ 3 մ. 30 սմ., աղջիկները՝ 2 մ. • 80 սմ.) :

Հիմնական նյութ՝ Յատկումներ բարձրություն վաղքով՝ ծնկները վեր քաշելով, բարձրությունն աստիճանաբար մեծացնելով և հասցնելով ցույց տված նորմային. ցատկումներ լրացուցիչ շարժումներով՝ հրվելու, թեերի թափը և վայրեջքի գործողությունները մշակելու համար. ցատկումներ յերկարություն վաղքով և տեղից՝ վաղքի և ցատկումի տեխնիկայի ուսումնասիրություն

(Վոտքերի և թեկրի աշխատանքի և վայրեջքի)։ ցատկումներ խորություն 100 սմ-ից վոչ ավելի՝ կքանիստից և ուղիղ կանգնած դրությունից մեզմ վայրեջքով։

Լրացուցիչ նյութ։ Կողքից բարձրություն ցատկելու ձեփ ուսումնասիրություն։ Հենացատկ (գործիքներ — այժ, նժույշ) — վերցատկ ծնկների վրա—վարցատկ։ վերցատկ ծնկների վրա—վարցատկ՝ կանգնած դրությունից։ Ցատկ ապավոտած։

Վարցատկ շվեդական պատի 3—6 ճողից՝ յերեսը դեպի շվեդական պատը դրությունից։

ՄԱԳԼՅՈՒՄ ՅԵՎ ՎԵՐՍՄԱԳԼՅՈՒՄ

Նորմատիվ ցուցանիշ։ Մագլցում վոտքերի ողնությամբ՝ աւղաճիդ պարանի կամ ձողի վրայով, տղաները՝ 3 մ., աղջիկները՝ 1 մ. 50 սմ. (տարածությունը հաշվվում է կանգնած, թեկրը վեր պարզած դրությամբ բռնվածքի տեղից)։ (ՅԵՊԱ. տղաները՝ 5 մ., աղջիկները՝ 2 մ. 30 սմ.)։

Հիմնական նյութ։ Մագլցում ուղղաճիդ պարանի կամ ձողի վրայով՝ թեկրի և վոտքերի ողնությամբ, 2 տեմպով։ մագլցում շվեդական պատի վրայով։ վերամագլցում մեկ գործիքից մյուսին։

Լրացուցիչ նյութ։ Մագլցել հորիզոնական, թեք և ուղղաճիդ սանդուխքով։ 1 մ. 20 սմ-ից մինչև 1 մ. 75 սմ. բարձրությամբ ցանկապատից վերամագլցելու վարժություններ։ վերամագլցելու տեխնիկայի ուսումնասիրություն, մագլցելու և վերամագլցելու գործադրությունն եստաֆետներում։

ՏԵՂԱՇԱՐԺ ԿՈՍՑԱԾ ՅԵՎ ՍՈՂՈՒՄ

Հիմնական նյութ։ Կողքով սողալու տեխնիկայի ուսումնասիրություն։

ՀԱՎԱՍԱՐԺ ԿՈՍՑԱԾ ՅԵՎ ՏԵՂԱՇԱՐԺ

Նորմատիվ ցուցանիշ։ 1 մ. բարձրության հորիզոնական բումի վրայով քայլել (դեմքը դեպի առաջ), 30 սմ. բարձրությամբ արդելքի վրայից անցնելով և ապա վարցատկ։

(ՅԵՊԱ. դերանի կամ բումի վրայով քայլել բեռնված՝ աղաները՝ 1 մ. 20 սմ. բարձրությամբ, 5 կլգ. բուով, աղջիկները՝ 1 մ. 10 սմ. բարձրությամբ, 3 կլգ. բուով)։

Հիմնական նյութ։ Քայլել գեղի առաջ՝ գարձերով և կանգերով։ զանազան առարկաներ (մարդակայտ, զնոպակ) տեղափոխել՝ 60, 80, 100 և 120 սմ. բարձրությամբ հորիզոնական բումի, գերանի կամ շվեդական պատի վրայով։

Դ Ա Հ Ա Կ Կ Ն Ե Բ

Նորմատիվ ցուցանիշ։ Քայլել 2 կլմ՝ չափավոր խորդուբորդ վայրով—տղաները՝ 20 բումեյում, աղջիկները՝ 24 բումեյում։

(ՅԵՊԱ. տղաները՝ 3 կլմ. 22 բումեյում, աղջիկները՝ 2 կլմ. 18 բումեյում)։

Հիմնական նյութ։ Քայլել ուսուական քայլով (փոխեփոխ) շարթ և չափավոր խորդուբորդ վայրով։ տեղում կատարել «աստղաձև» գարձեր, փոքրիկ բարձրություններից սահել սովորել՝ առանց ձեռնափայտերի և ձեռնափայտերն ազատ կերպով հետեւում պահպանով։

Լրացուցիչ նյութ։ Յերկու և յերեք քայլանի ֆինսական քայլի ուսումնասիրություն։ յերկուսով բարձրությունից ցածրացել, իրար ձեռքից բռնած։

II. ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Մ Ե Բ Ա Յ Ա Լ Բ Ե Բ

Հիմնական նյութ։ Մեղրովներ կամ ավազով տոպլակներ բարձրացնել, հանձնել ու տեղափոխել՝ տղաները մինչև 5 կլգ., աղջիկները մինչև 3 կլգ. քայլով, վազքով մինչև 20 մ. տարձություն (անց և կացվում եստափետ խաղերի ձեռվ)։

Կ Ե Ն Դ Ա Կ Կ Բ Ա Շ

Հիմնական նյութ։ Բնկերով չորս հոգով բարձրացնել և տեղափոխել։

III. ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ն Ե Տ Ո Ւ Մ

Նորմատիվ ցուցանիշ՝ Խոկեյի գնդակների նետում ըստ Հեռավորության՝ տղաները՝ 30 մ., աղջիկները՝ 18 մ.:

(ՅԵՊԱՊ. 500 գր. ծանրություն ունեցող նոնակի նետում ըստ հեռավորության՝ տղաները՝ 25 մ., աղջիկները՝ 14 մ.).

Հիմնական նյութ. Խոկեյի գնդակն աջ և ձախ ձեռքով բառ հեռավորության նետել տեղից և վազքով (տեխնիկայի կատարելագործում)։ ուստինե գնդակը դեպի շարժվող (կենդանի) նշանը նետել՝ «վորսորդներ և բաղեր» տիպի խաղերում։

Լրացուցիչ նյութ. 300-ից մինչև 500 գր. ծանրություն ունեցող նոնակի նետման ուսումնասիրություն։

ՀՄԲՇԱՄԱՐՏԻ ՅԵՎ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՄՐԵՐ

Հիմնական նյութ. Հասարակ դիմադրություն ձգելով և չըելով՝ «Արևորակուիլ», «Առարկայակուիլ» տիպի խաղերում (դույդ դիմադրություն)։

IV. ՃԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՈՒԹՅՈՒՆ

Հիմնական նյութ. Շարքի բնորոշումը. թևեր, ճակատ, զուգայուն, քառասյուն և զուգաշալ կազմել (դասարանը ներկայացնում է իրենից դասակ, վորը բաժանված է չորս ջոկի)։ դարձեր, կանդեր, քայլելիս։

V. ՀԱԿԱԳԱԶ

Նորմատիվ ցուցանիշ՝ Ծանոթանալ հակագազի, կազմությանն ու ողտագործմանը, քայլել հակագազ հագած 200 մ. հեռավորության վրա։

Գ. Խ Ա Ղ Ե Բ

1. ԽԱՂԵՐ ՎԱԶԵԼՈՎ

ա) Եստաֆետ վաղքով, զուգայունով և քառայունով՝ «Հանդիպական եստաֆետ» և «բուլավաների փոխադրում» խա-

ղերում. բ) Մրոտողներ՝ տողաներով («Մրոտողներ մարչիրով՝ կայով»)։ (Ն. Ֆիլիտիս. խաղեր, մաս 4-րդ, հրատ. «Գումարկ», 1927 թ., եջ 30)։ գ) «Կանչ» (Ն. Ֆիլիտիս. խաղեր, մաս 2-րդ, եջ 97)։

2. ԽԱՂԵՐ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՄՐԵՐՈՎ

ա) Մալիեր չղթայով. «Ուոկան», «Զկան վորս», «Լոքո», «Քեռի չվան» և այլն (Ա. Վիշնևսկի և Ն. Պանովա. Կոտնտեսային պիոներների խաղեր։ Հրատ. «Մոլողայա Գվարդիա», 1935 թ., եջ 77)։

բ) «Կայտառ ձի» (Ն. Ֆիլիտիս. խաղեր մաս 2-րդ, եջ 20)։
գ) «Քաշիր չրջանի մէջ» (Ն. Ֆիլիտիս, եջ 18)։

3. ԽԱՂԵՐ ՄԵԿ ՅԵՎ ՅԵՐԿՈՒ ՎՈՏԲԵՐԻ ՎՐԱ ՅԱՏԿԵԼՈՎ

ա) Եստաֆետ-իայտը վոտքերի տակ (Ա. Վիշնևսկի և Ն. Պանովա, 1934 թ., եջ 87)։

բ) «Կառիթ մեծ գնդակով» (Մ. Կորնիլովա-Ռադինա, «Նոր յերեխաներին-նոր խաղեր»։ Բժշկական հրատարակչություն, 1928 թ., եջ 93)։

Ծանոթություն. Այս խաղը պետք է կատարել՝ հաշվի առնելով աչկոները, առանց խաղից դուրս դարձել։

դ) «Կաղ սաղը»։

4. ԽԱՂԵՐ ՄԱԳԼՅԵԼՈՎ ՅԵՎ ԿԱԽՎԵԼՈՎ

ա) Եստաֆետներ մազլցելով։

բ) «Բուլորդ վրան» (սալկեր՝ կախվելով և մազլցելով)։

5. ԽԱՂԵՐ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՎ

Եստաֆետ զանազան ծանրության և ծալալի առարկաներ տեղափոխելով մեկ հոգով և յերկուսով։

6. ԽԱՂԵՐ ՆԵՏՈՒՄՈՎ

ա) Ողեր նետել ու բռնել.

բ) պասում մեծ գնդակներով չրջաներում՝ խմբերով կամ

յերկուսով։ Նույնը՝ փոքրիկ գնդակով (կետերը հաշվելով), «Նշանառու կուեկտիվ», «Հարմած աթոռին» գնդակը կենտրոնում։

- դ) եստաֆետ՝ յերկուսով նետելով և բռնելով.
դ) եստաֆետ՝ «Դրիբինդ» (վաղել առաջ, ափով շարունակ գետնին խփելով գնդակը)։
ե) «Վորսորդներ և քաղեր»։

7. ԿԻՍԱՍՊՈՐՏԱՅԻՆ ՑԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԽԱՂԵՐ

- ա) «Փորձահրաձղություն» (Ա. Վիշնևսկի և Ն. Պանվա, կոլտնտեսային պիոներների խաղեր, 1934 թ., էջ 65)։
բ) «Վորսորդներ և չներ» (կապիկի վորս)։ Կորնիլովա-Ռադինա, էջ 138։
շ) Ռուսական գնդաթի (լապտա) (Ա. Վիշնևսկի և Ն. Պանվա, էջ 107)։
դ) Գորոդկի (Ա. Վիշնևսկի և Ն. Պանվա, էջ 72)։
ե) Խոտալական գնդաթի։
զ) «Բերդ», «Կալանակորի սրահ», «Դրոշակալսալ» (Վ. Վարդանյան, Հ. Փարսադանյան, «Դպրոցական խաղեր», 1931 թ., Պետհրատ)։

Դ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ի. Թեմա. ինչի՞ համար ե մեզ հարկավոր ֆիզիկական կուլտուրան։ ԽՍՀ Միության քաղաքացիների բարձակողմանի Փիզիկական զարգացումը, նրանց առողջության ամրապնդումն ու կուտումը, գործադրական Փիզիկական կուլտուրայի ունակությունների և հոգեֆիզիկական հատկությունների դաստիարակում՝ սոցիալիստական աշխատանքի և ԽՍՀ Միության պաշտպանությանը պատրաստելու նպատակով։

Ա. քենա. ի՞նչ ե ՑԵՊԱՊ-ը (թեման անցնում են այն դեպքում, յեթե այն չեն անցել կամ բավարար չափով չեն յուրացրել 4-րդ դասարանում)։

ՊԵՏԵՐՈՐԾ ՊԱՍՏՐԱԿԱՆ

Ա. ՀՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորմատիվ ցուցանիշ. ձիչտ կերպով կատարել II աստիճանի ՑԵՊԱՊ-ի ազատ շարժումների 8 տակտը։

I. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ
ՄԿԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԿՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ԶԱՐԴԱՅ-
ՆՈՒՄ ԵՆ ՈՒՃՆ ՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարժություններ մեղքուղով. տղաները՝ մինչև 5 կլգ., իսկ աղջիկները՝ մինչև 3 կլգ. ծանրության մեղքուղներով, նետել և բռնել յերկուսով։

2. Անկումներ զանազան ուղղություններով թևերի շարժումներով։

3. Կիսակքանիստից անկում դեպի կողմերն ու առաջ՝ թերթերի շարժումով։

4. Կքանիստ մեկ վոտքի վրա, մյուս վոտքը դեպի առաջ, կողմ կամ յետ տանելով։

5. Խմբական վարժություններ շվեդական նստարաններով (նստարանը բարձրացնել և իջեցնել)։

6. Ուղիղ պարզած վոտքը կտրուկ բարձրացնել դեպի առաջ, կողմ և յետ՝ ընկերովը, շվեդական պատի ձողին, բումին կամ այլ երի հենվելով։

7. Անկումներ, վորից հետո ճոճում՝ ծալված վոտքի վրա։

8. Քայլք լայն անկումներով։

9. Պառկած, վոտքերը ձգած ու ամրացրած, ձեռքերը ծոճրակին դրությունից նստել և նորից պառկել (մեջքն ուղիղ)։ Նույնը շվեդական նստարանի լայնությամբ նստած դրությունից։ Շվեդական նստարանի լայնությամբ յերեսնիվայր ազդրերի վրա պառկած, վոտքերն ամրացրած և ձեռքերը ծոճրակին դրությունից բարձրացնել, արտածալել մեջքը։

10. Շվեդական պատից կախված (մեջքը դեպի պատը) կծկել վոտքերը։ Ուղիղ ձգած վոտքը փոխեփոխ բարձրացնել՝ հասցնելով ուղիղ անկյան։

11. Ծնկած՝ աստիճանաբար նստել կրունկների վրա (թե՛ռ դեպի յետ), այսուհետև ուղղվել՝ թեկը վեր բարձրացնելով:

12. Մեջքի վրա պառկած կատարել վոտքերի շրջանաձև շարժումներ:

13. Մեջքի վրա պառկած, թեկը դետնին հենած դրությունից վոտքերն ու կոնքը վերև բարձրացնել և վոտքերի մատերը գլախ յետեռում հասցնել դետնին:

II. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՆՋԱՌՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Վոստյուններ տեղում և տեղից՝ մեկ և յերկու վոտքերի վրա:

2. Վաղք՝ ծնկները վեր բարձրացնելով:

3. Վաղք միջին տեմպով մինչև յերկու բողեք:

III. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ, ՃՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒՆ ՑԵՎ ԻՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒՆ

1. II աստիճանի ՅԵՊԱՊ-ի աղատ շարժումների 8 տակտ:

2. Քայլելու, վաղելու, ցատկումների գործողությունները դուզորեկել թեկը զանազան ուղղություններով կատարվող շարժումներին:

3. Գերանի, շվեդական նստարանի ձողի վրայով քայլել՝ ձեռներն ու վոտները շարժելով և գնդակ նետելով ու բռնելով:

4. Ստարտից պոկվել (անցնելով 10—15 մ.) ծնկած, նըստած, պառկած դրությունից (աղղանչանով):

Բ. ԴՈՐԾԱԴՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ՑԵՎ ԽՈՉԼՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Ք Ա Յ Լ Ք

Հիմնական նյութ. Քայլելու արագությունը հրաժանին հարմարեցնելը: Քայլք կուցած:

Վ Ա Զ Ք

Նորմատիվ ցուցանիշ. Տղաները՝ 60 մ. 11 վայրկյանում, աղջիկները՝ 60 մ. 12 վայրկյանում:

(ՅԵՊԱՊ. տղաները՝ 60 մ. 9 վայրկյանում, աղջիկները՝ 10 վայրկյանում):

Հիմնական նյութ. Ցածր ստարտի, կարճ հեռավորության վրա արագ վաղքի և ֆինչի նետման տեխնիկայի կատարելագործում. արագ վաղք մինչև 100 մ.: Դանդաղ վաղք՝ տղաները՝ մինչև 4 բողեք, աղջիկները՝ մինչև 3 բողեք: Կուցած վաղք՝ տեխնիկայի ուսումնասիրություն:

Լրացուցիչ նյութ. Վաղք վայրում (կրոսս). տղաները՝ մինչև 1 կմ., աղջիկները՝ մինչև $\frac{1}{2}$ կմ. (առանց ժամանակի հաշվառման):

Ց Ա Տ Կ Ո Ւ Մ Ն Ե Ր

Նորմատիվ ցուցանիշ. Բարձրություն վաղքով. տղաները՝ 95 մ., աղջիկները՝ 85 մ.: Յերկարություն վաղքով. տղաները՝ 3 մ. 20 սմ., աղջիկները՝ 2 մ. 60 սմ.:

(ՅԵՊԱՊ. բարձրություն վաղքով. տղաները՝ 1 մ. 10 սմ., աղջիկները՝ 95 սմ., յերկարություն վաղքով. տղաները՝ 3 մ. 30 սմ., աղջիկները՝ 2 մ. 80 սմ.):

Հիմնական նյութ. Ցատկումներ բարձրություն վաղքով՝ «անդիխական» կողքային ցատկումներ, ցատկումներ յերկարությամբ վաղքով՝ վոճիկ կատարելագործում (ցատկումի յերկարությունն աստիճանաբար մեծացնելով): Հենացատկումներ. ցատկումներ՝ վոտքերը կծկած («կծկիկ») այծի և բռնակներով ու առանց բռնակների նժույզի վրայից. ցատկումներ՝ թեկը կախված դրությունից (վերեկից բռնած)՝ վարցատկ դեպի առաջ և յետ) գործիքն այնպիսի բարձրության վրա յետ դտնվում, վորեկից կախված կուտակում համար անհրաժեշտ և ցատել). ցատկում (վարցատկ)՝ մեջքով դեպի շվեդական պատը կախված դրությունից:

Լրացուցիչ նյութ. Ցատկում բարձրություն՝ վայրեղքի կամ հրման կետը հեռացնելով. ցատկում՝ վոտքերը բաց արած («վոտնաբաց») և «կծկիկ»՝ այծի վրայով՝ հրման կետը հեռացնելով (միմիայն աղաների համար):

Նորմատիվ ցուցանիշը՝ Մագլյում վոտքերի ողնությամբ՝ ուղղաձիգ պարանի կամ ձողի վրայով. տղաները՝ 4 մ., աղջիկները՝ 2 մ., կախված դրությունից (բռնվածքը վերևից) 2 անգամ ձզվելը միայն տղաները։ (ՅԵՊԱՊ. մագլյում պարանի վրայով. տղաները՝ 5 մ., աղջիկները՝ 2 մ. 30 սմ.)։ Զգվել 3 անգամ (միմիայն տղաները)։

Հիմնական նյութ. Կախված դրությունից վոտքերը գետնին հենած՝ հարված տալով ձզվել (աղջիկների համար)։ Կախված դրությունից առանց վոտքերը գետնին հենելու՝ ձզվել (տղաների համար)։ մագլյում ուղղաձիգ ձողի կամ պարանի վրայով թեփերի և վոտքերի ողնությամբ՝ յերկու տեսապով։

Լրացուցիչ նյութ. Մագլյում թեք պարանի վրայով. անհատական վերամագլյում 2 մ. բարձրությամբ պատի վրայից (միմիայն տղաների համար) և խմբական վերամագլյում վարժվողների ողնությամբ (տղաների և աղջիկների համար)։

ՏԵՂԱՇԱՐԺ ԿՈՍՑԱԾ ՅԵՎ ՍՈՂՈՒՄ

Հիմնական նյութ. «ՊԼԱՍՏՈՆԱՁԿ» սողալու տեխնիկայի հասումնափություն։

Լրացուցիչ նյութ. Սողում մարդակայտով. մագլյում խոչընդատի տակից։

ՀԱՎԱՍԱՐԱԿՇԱՌՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ ցուցանիշը՝ 1 մ. 10 սմ. բարձրության հորիզոնական բումի վրայով քայլել բեռով՝ տղաները՝ 5 կլգ., աղջիկները՝ 3 կլգ., աղա վար ցատկել՝ առանց բեռի։

(ՅԵՊԱՊ. տղաները՝ 1 մ. 20 սմ.—5 կլգ. բեռով, աղջիկները՝ 1 մ. 10 սմ.—3 կլգ. բեռով)։

Հիմնական նյութ. Տեղաշարժ մինչեւ մեկ մ. 20 սմ. բարձրություն ունեցող հորիզոնական բումի վրայով՝ յերեսը դեպի առաջ, կանգնած և հեծած, բումի վրայով 3—5 կլգ. ծանրության մեղրուներ և ավազով տոպլրակներ փոխադրել։

Լրացուցիչ նյութ. Բումի վրայով շարժվել՝ կանգնելով, դարձերով և տեղաշարժվելու ձեւերը փոփոխելով. նույնը, սակայն բումը 1 մ. 30 սմ. բարձրացնելով. բումի վրայով յետ շարժվել (մեջքը դեպի առաջ), 70 սմ. բարձրության վրա։

Նորմատիվ ցուցանիշը՝ Քայլել՝ չափավոր խորդություն վայրով. տղաները՝ 3 կլմ. 27 բուպեյում, աղջիկները՝ 2 կլմ. 22 բուպեյում։

(ՅԵՊԱՊ. տղաները՝ 3 կլմ. 22 բուպեյում, աղջիկները՝ 2 կլմ. 18 բուպեյում)։

Հիմնական նյութ. Յերկայլ և յեռաքայլ ֆիննական վոճի տեխնիկայի ուսումնասիրություն. արագ քայլել ֆիննական վոճակ. տղաները՝ մինչեւ 1½ կլմ., աղջիկները՝ մինչեւ 1 կլմ. հեռավորության վրա. «Վոտեկվոտ» դարձեր քայլելիս, փոքր զարի վայրերով բարձրանալ և իջնել։

Լրացուցիչ նյութ. Քայլել խորդություն վայրով. տղաները՝ մինչեւ 2 կլմ., աղջիկները՝ մինչեւ 1½ կլմ.։

II. ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐ

Մ Ե Ռ Յ Ա Լ Բ Ե Բ

Հիմնական նյութ. Առարկաները բարձրացնել, հանձնել և մինչեւ 30 մ. հեռավորության վրա տեղափոխել՝ քայլելով ու վաղելով. առարկաների ծանրությունը՝ տղաների համար մինչեւ 8 կլգ., աղջիկների համար մինչեւ 5 կլգ. (անց ե կացվում ետափետ-խաղերի ձեռով)։

ԿԵՆԴԱՆԻ ՔԱՇ

Տեղափոխություն զույգով։ Տեղափոխության ձեւեր. «աթոռ», «տաքուրետ», «բաղկաթոռ»։ Խաղ՝ «Սանիտարներ»։

III. ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐ

Ն Ե Տ Ո Ւ Մ

Նորմատիվ ցուցանիշը՝ Ներկել 500 գր. ծանրության նոնակը հստ հեռավորության, տղաները՝ 18 մ., աղջիկները՝ 12 մ.։



(ՅԵՊԱԳ. աղաները՝ 25 մ., աղջիկները՝ 14 մ.):

Հիմնական նյութ. Նետել խոկեյի գնդակն ըստ հեռավորության. տեղից և առաջ շարժվելով նետել աջ և ձախ ձեռքով 500 գր. ծանրության նոնակներ (քայլելով, վազելով). ուստինե դընդակների նետում կենդանի նողատակին (խաղի ձեռք):

Լրացուցիչ նյութ. Հրել աջ և ձախ ձեռքով 1 կլգ. ծանրության քար:

ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐ

Հիմնական նյութ. Դիմադրություն «Արլորակով» տիպի խաղերում. իրար ձգել գծի վրայից՝ յերկուսով և խմբով:

IV. ՇԱԲԱՋԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնական նյութ. Շարափոխություն տեղից և քայլելիս՝ կազմելով հատայունից զուգասյուն և քառասյուն, զուգասյունից՝ քառասյունից՝ զուգասյուն և հատայուն, զուգասյունից՝ հատայուն (քայլելով, վազելով): Քայլ—մարչ մինչև 1 կլմ. հեռավորության վրա (խորը տեղաշարժ՝ քայլ, վազել):

V. ՀԱԿԱԳԱԶ

Նորմատիվ ցուցանիշ. Քայլել հակագազով 500 մ.:

Գ. Խ Ա Զ Ե Բ

1. ԽԱՂԵՐ ՎԱԶԵԼՈՎ

ա) Զանազան տեսակի եստաֆետներ յերկու-յերեք խոչընդուներով:

բ) Վազելվագ «գերիով»: (Պ. Լեսգափտ, «ՅԵՐԵԽԱՆԵՐԻ Փի-դիկական կրթության ձեռնարկ», 2-րդ մաս, եջ 176, Ն. Ֆիլիտիս, «Խաղեր», 2-րդ մաս, եջ 46):

գ) «Գաղանոց», «Հետախույզներ», «Արագավազներ», «Ջրի-սաղնդի» և այլն (Վ. Վարդանյան, Հ. Փարսադանյան «Դպրոցական խաղեր»):

2. ԽԱՂԵՐ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐՈՒԴ

ա) «Քայլել վրջանի մեջ» (խփել գուրզերը՝ փոքրիկ խմբերով):

բ) Զգել առղաններում՝ գծի վրայից:

գ) Զգել պարան (տեղից, վազելով՝ հրամանով):

3. ԿԻՄԱՍՊՈՐՏԱՅԻՆ ՑԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԽԱՂԵՐ

ա) Գնդակ կապիտանին: (Ա. Վիշնևսկի—«Անչափահաների ապորտ խաղեր», եջ 122):

բ) Վալեյբոլ:

գ) Ամերիկական գնդավարի: (Պ. Լեսգափտ — «ՅԵՐԵԽԱՆԵՐԻ Փիզիկական կրթության ձեռնարկ», 2-րդ մաս, եջ 236):

դ) Գերմանական գնդավարի (Պ. Լեսգափտ, եջ 233):

յ) «Կապիտան-Բոլ», «Պիոներ-Բոլ», «Պատի գնդակ» («Պիոներ դեկ» և «Հարվածային Փիզկուլտուրնիկ» ժուռնալներ, 1934 թիվ):

Դ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՂՏՈՒՐԱՅԻ ՑԵՍՈՒԹՅՈՒՆ

Թեմա՝ «Ինքնավերահսկողություն»: Փիզկուլտուրայի պարագաների ժամանակ հետևել ընդհանուր ինքնազարդացմանը: Քաշը վորպես Փիզկուլտուրայի պարագաների հետևանքների ցուցանիշ: Ի՞նչ է նշանակում սպիրոմետրիա: Ի՞նչ է նշանակում զարկերակ: Սրտի բարախման արագացումը Փիզկուլտուրայի վարժությունների ժամանակ, վերադարձ գեղի նորման:

ՑՈՐԵՐՈՐԴ ԳԱՍԱՐԱԿ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորմատիվ ցուցանիշ. Ճիշտ կերպով կատարել ՑԵՎԱԳ-ի Առաջինականի ազատ շարժումները:

I. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ ՄԿԱ-
ՆԱՅԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԶԱՐԳԱՅՆՈՒՄ
ՈՒԺՆ ՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԼ

1. ԹԱԵՐԻ Վարժություններ դիմադրության տարբերով
(վարժություններ զույգերով) :

ա) ԹԱԵՐԻN իջեցնել և բարձրացնել, մոտեցնել և հեռացնել
(դիմադրով կանգնած դրությամբ կամ ծնկած) :

բ) ԹԱԵՐԻN արմունկի հողում դիմադրությամբ ծալել և բա-
ցել :

դ) Պայքար առարկայի համար զույգերով (գնդակը խւել) :

2. ԹԱԵՐԸ ծալել՝ յերեսնիվայր ձեռքերին հենված դրու-
թյամբ :

3. Կքանիստ մեկ վոտքի վրա՝ ողնությամբ :

4. Կախված դրությունից շլեղական պատի վրա կանգնած՝
կատարել խորը կքանիստ, մյուս վոտքը դեպի յետ տանելով
(յերեսը դեպի պատը) :

5. Կանգնած, վոտքերը տարածած դրությամբ, մարմինը
թեքել դեպի առաջ՝ ձեռքերով բռնելով սրունքներից, ապա մար-
մինը ուղղել և թայրը դեպի վեր պարզել :

6. Կքանիստից թայրը վոտքի թաթերի մոտ գետնին հենած՝
վոտքերն ուղղել, կրունկներն ու ձեռքերը դետնից չկտրելով,
մեջքը «կլոր», գլուխը դեպի ցած իջեցրած :

7. Կանգնած, վոտքերը տարածած դրությունից իրանը
դարձնել աջ և ձախ, միաժամանակ թեքվելով դեպի ցած (դեպի
աջ և ձախ աղդրը) :

8. Մեկ ծնկի վրա չոքած, մյուս վոտքը կողմ տարած դրու-
թյունից՝ իրանը թեքել դեպի պարզած վոտքի կողմը, լրացնեցի՛
կերպով մարմինը ճոճելով (ձեռքը սահում և վոտքի վրայով) :

9. Մեջքով դեպի շվեղական պատը կախված դրությունից՝
կծկել վոտքերը և ապա պարզել առաջ (կազմել «դիմաքեր»)՝
վոտքերն իջեցնել :

II. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՆՋԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՅԱՆ
ՇՐՋԱՆԱՄՅՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վոստյուններ, վաղք՝ ծնկները վեր բարձրացրած, մինչեւ
մեկ րոպե տեղությամբ:

III. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒ-
ՆՈՒԹՅԱՆ, ԺՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԻՐ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՐ-

1. Վարժություններ յերկու փոքրիկ գնդակներով միաժա-
մանակ (յուրաքանչյուր ձեռքին մեկական գնդակ) :

2. Կոմբինացիաներով վարժություններ զանազան ուղղու-
թյուններով և տարբեր լարվածությամբ :

3. Քայլել և վաղել հանկարծակի ընկնելով (աղդանշանով
պառկել գետնին) :

4. Քայլելու և վաղելու ժամանակ ուղղությունները փոխել՝
տեսողական կամ լսողական աղդանշանով :

5. ՅԵՎԱՊ-ի II աստիճանի աղաս շարժումներ :

Բ. ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ՅԵՎ ԽՈԶԸՆԴՈՏՆԵՐ ՀԱԴԹԱՀԱՐԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐ

Ք Ա Յ Լ Ք

Հիմնական նյութ. Տեմպի մարզելը բնական լայն քայլի դեպ-
քում՝ մեկ ըոպեյում 130—140 քայլ (կատարվում է դահլիճից
գուր) :

Ք Ա Զ Ք

Նորմատիվ ցուցանիշ. Տղաները՝ 100 մ. 16,5 վայրկյանում,
աղջիկները՝ 60 մ. 10 վայրկյանում:

(ՅԵՎԱՊ. աղաները՝ 100 մ. 14,5 վայրկյանում, աղջիկները՝
100 մ. 16 վայրկյանում):

Հիմնական նյութ. Վաղք ըստ արագության. Վաղքի սկիզբն
ու վերջը տարբեր դրություններից և դրություններով՝ կանգ-
նած, ծնկած, պառկած՝ հանկարծակի հրամանով. Փինիչում չո-
քելու և պառկած վիճակի անցնելու ձեի ուսումնասիրություն.
Վաղք՝ մինչև 100 մ. տարածությամբ. Վաղք՝ մինչև 500 մ. տա-
րածությամբ:

Լրացուցիչ նյութը։ Վաղք կուացած արագության վաղքում՝ ցույց տրված բարդություններով և 30 մ. վաղելաղք։ վաղք վայրում (կրոսս)։ տղաները՝ մինչեւ 1,5 կլմ., աղջիկները՝ մինչեւ 800 մ. հեռակորությամբ (առանց ժամանակի հաշվառման)։

ՑԱՏԿՈՒՄ ԵՐ

Նորմատիվ ցուցանիշ։ Բարձրություն վաղքով՝ տղաները՝ 1 մ. 05 սմ., աղջիկները՝ 90 սմ., յերկարություն վաղքով՝ տղաները՝ 3 մ. 50 սմ., աղջիկները՝ 2 մ. 80 սմ.։

(ՅԵՊԱՊ. բարձրություն—տղաները՝ 1 մ. 15 սմ., աղջիկները՝ 1 մ. յերկարություն—տղաները՝ 4 մ., աղջիկները՝ 3 մ. 10 սմ.)։

Հիմնական նյութ։ Բարձրություն «կողքով» (անդիմական) և յերկարություն ցատկելու կատարելագործում։ Հենացատկումներ կողքով՝ «կողացատկ»։

Լրացուցիչ նյութ։ Ցատկումներ փայտով աղատ, հենված մեկ ձեռքին կամ մեկ վոտքին (բումի, սժույգի, ցանկապատի, զերանի վրայով)։ Կոմբինացիոն ցատկումներ՝ բարձր խոր և հեռու-խոր։ ցատկումներ «պատուհանով»։

ՄԱԳԼՑՈՒՄ ՅԵՎ ՎԵՐԱՄՍԱԳԼՑՈՒՄ

Նորմատիվ ցուցանիշ։ Մագլցում ուղղաձիգ պարանով՝ վոտքերի ոգնությամբ։ տղաները՝ 5 մ., ձկվել 3 անգամ, աղջիկները՝ 2 մ. 50 սմ.։

Հիմնական նյութ։ Մագլցում զանազան ձևերով։ պարանի վրա «ողակներ» անել, ձողի վրայով մագլցելու հիմնական ձեմքեր։ ցանկապատով վերամագլցել՝ զանազան ձևերով (ցանկապատի բարձրությունը տղաների համար 2 մ. 20 սմ., աղջիկների համար 2 մ.)։ Աղջիկները պատից վերմագլցում են խմբովին։

Լրացուցիչ նյութ։ Թափ՝ կախված և ձեռքերը ծալված դրությամբ, ձեռնաքայլք կախից անցնել հենման (պատուաձողի վրա ծնկատակից կախվելով, վոտքերը դեպի առաջ ու վեր բարձրացնելով)։

Ս Ա Չ Ո Ւ Մ
Լրացուցիչ նյութ։ Սողալ յերեսնիվայր (միայն տղաները)։ սողալ (կողքի վրա) 2 կլգ. ծանրության մեղքով։

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՅՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ ցուցանիշ։ Քայլել 1 մ. 20 սմ. բարձրությամբ բումի վրայով։ տղաները՝ 5 կլգ. բեռով, աղջիկները՝ 3 կլգ. բեռով, աղատ վարցատկ առանց բեռի։

(ՅԵՊԱՊ. քայլել հորիզոնական բումի վրայով։ տղաները՝ 1 մ. 50 սմ. և 5 կլգ. բեռով, աղջիկները՝ 1 մ. 20 սմ. բարձրությամբ—3 կլգ. բեռով)։

Հիմնական նյութ։ Վերոհիշյալ բարձրությամբ վատահ քայլելու մարզում, անցումներ փոքր բարձրությամբ նեղ հենաձրապարակով՝ զուգորդված զանազան խոչընդուների հետ (եստափետների ձևով)։

Լրացուցիչ նյութ։ Տեղաշարժում կողքով 70 սմ. բարձրության վրա։

Դ Ա Չ Ո Ւ Կ Ն Ե Ր

Նորմատիվ ցուցանիշ։ Քայլք՝ չափավոր խորդուբորդ վայրով։ տղաները՝ 2 կլմ. 24 րոպեյում, աղջիկները՝ 2 կլմ. 20 րոպեյում։ (ՅԵՊԱՊ. տղաները՝ 3 կլմ. 22 րոպեյում, աղջիկները՝ 2 կլմ. 18 րոպեյում)։

Հիմնական նյութ։ Քայլել ոռւսական քայլքով և Փիննական մեկ և յերկայլանի քայլքով (դաստուի առաջադրությամբ)։ արագ վաղք (աղատ վոճով) 1 կլմ հեռավորությամբ։ վայրեջք բարձրություններից և արգելակում փայտերով։ «սանդիսաձե» ու «յեղևաձե» վերելքներ (վերջինն՝ համապատասխան ամուր կապանք լինելու դեպքում)։

Լրացուցիչ նյութ։ Քայլք խորդուբորդ վայրով։ տղաները՝ 2 կլմ., աղջիկները՝ $1\frac{1}{2}$ կլմ.։

II. ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Մ Ե Թ Յ Ա Լ Բ Ե Թ

Նորմատիվ ցուցանիշ։ 16 կգ. ծանրության փամփշտարկղի բարձրացում և տեղափոխություն։ տղաները՝ 25 մ. տարածու-

թյան վրա, աղջիկները՝ նույն տարածությունը և նույն ծանրությունը՝ յերկու հոգով:

(ՅԵՊԱՊ. տղաները՝ 16 կլգ. ծանրության փամփչապարկղի բարձրացում և տեղափոխություն 50 մ. հեռավորության վրա. աղջիկները՝ «վիրավորի» տեղափոխություն՝ յերկուսով):

Հիմնական նյութ. Զանազան ճեխ բնոի բարձրացման և տեղափոխության ուսումնասիրություն:

Ինոի բարձրացում, հանձնում և տեղափոխություն—վաղքով և քայլքով:

Լրացուցիչ նյութ. Վիրավորներին յերկուսով տեղափոխելու ուսումնասիրություն. վարժակցի տեղափոխություն (մեջքի, ուսերի վրա) և անհատական տեղափոխություն՝ զանազան միջոցներով (միմիայն տղաների համար):

III. ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ն Ե Տ Ո Ւ Մ

Նորմատիվ ցուցանիշ. 500 գր. ծանրության նոնակի նետում ըստ հեռավորության—տղաները՝ 25 մ., աղջիկները՝ 15 մ.:

(ՅԵՊԱՊ. 700 գր. ծանրության նոնակի նետում. տղաները՝ 30 մ., աղջիկները՝ 20 մ.):

Հիմնական նյութ. 500 գր. ծանրության նոնակի նետում ըստ հեռավորության աջ և ձախ ձեռքով՝ տեղից, կանդնած, ծնկած դրությունից. նույնը՝ տեղաշարժվելով (քայլքով, վաղքով):

Լրացուցիչ նյութ. 700 գր. ծանրության նոնակի նետում. քարի կամ թեթևացրած դնդի նետում. փայտերի նետում հեռավորության վրա:

IV. ՇԱՐԱՑԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնական նյութ. Շարափոխություն հրամանով և տեսողական աղղանշաններով. քայլք-մարչ մինչև $1\frac{1}{2}$ կլմ. հեռավորության վրա:

Վ. Հ Ա Կ Ա Գ Ա Զ

Նորմատիվ ցուցանիշ. 800 մ. տարածություն քայլել հակադադում:

1) «Վոտքի դնդակ չվճանում» (Ն. Ֆիլիտիս, 2-րդ ժամ, Էջ 22):

2) «Գնդակի չվեղական մրցություն» (Ն. Ֆիլիտիս, Էջ 42):

3) «Գնդակը բռնողին» (Ա. Վիշնևսկի և Պանվա, Էջ 115):

4) Եստաֆետներ յերկու, յերեք և չորս խոչընդուներով:

5) «Գնդակի փոխաձդություն վոտքով» (Ա. Վիշնևսկի և Ն. Պանվա, Էջ 121):

Դ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

I. Քեմա. Ի՞նչ է նշանակում II աստիճանի ՅԵՊԱՊ. Յերկորորդ աստիճանի ՅԵՊԱՊ-ի նորմաների վերլուծություն: Հիմնական հասկացողություններ սպորտային մարզման մասին:

Մարզման նշանակությունը, անհատական մարզման պլան կազմելը, ուժիմը մարզման ժամանակ:

II. Քեմա. Դահուկային սպորտի առողջապահությունը: Դահուկային սպորտի նշանակությունը (մկանների, սրաի, թոքերի ամրապնդում, ամբողջ որգանիզմի կոփում):

Բժշկի կոնսուլտացիայի անհրաժեշտությունը:

Դահուկային սպորտով զբաղվել սկսելու աստիճանականությունը և մարզումը: Դահուկալորի հագուստն՝ ու վոտնամանը: Դահուկալորի ուժիմն ու սնունդը:

Ութերորդ գասարան

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորմատիվ ցուցանիշ. Ճիշտ կերպով կատարել I աստիճանի ՅԵՊԱՊ-ի առավոտյան մարզմանքի 10 վարժությունը:

I. ՎԱՐԺԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ ՄԿԱՆԱՑԻՆ ՍՈՍԱՆՁԻՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ ԵՆ ՈՒԺՆ ՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անհատական աշխատանք մինչև 3 կլգ. ծանրության մեղքով. մեղքով ձեռքից-ձեռք նետել զանազան միջոցներով:

2. ՄԵՂՔՈԼԸ ԿԳԵԼ ՎՈՄՔՊՈՎ՝ ԲՌԱՆԵԼ ՃԵՌՔԵՐՈՎ (ՃԱՆՔՊՈՎԺՈՒՆԸ ՄԻՆՀԿ 1 ԿԱԳ.) :

3. ՄԵՂՔՈԼԸ ՎՈՄՔՊՈՎ ՃԵՄՆԻ ՎՐԱՅՈՎ ՌԱՂԻԴ և ԹԵՔ ՌԱՂՈՎ-ԺՈՒՆՆԵՐՈՎ ԳԼՈՐԵԼ (ՓՈՅ ԹԵ ԽՖԵԼՈՎ, այլ հրելով) :

4. Կարուկ շարժումներ ճեռքերով՝ ճեռքերը կողքերը և վերի բարձրացրած դրությունից :

5. Կքանիստ մեկ վոտքի վրա, մյուս վոտքը վոտնածայրի վրա պարզելով :

6. Արտանկում աջ վոտքի վրա դրությունից՝ նույն վոտքը տանելով յետ կամ թաթերի վրա կողմ դնելով:

7. Մարմինը ճիշտ կերպով թեքել դեպի առաջ և կողքերը, մինչև ուղիղ անկյուն կաղմելը, ճեռքերը ծոծրակին դրությամբ:

8. Ծնկած, թեկերը վեր բարձրացրած դրությունից, թեքվել դեպի յետ (մեջքն ուղիղ) :

9. Կախված դրությունից ուղիղ վոտքը պարզել առաջ և թափով տանել յետ:

10. Վոտքերը տարածած և կամ փակած հենվել ճեռքերով վոտների թաթի մոտ (վոտքերը ձգված են), ճեռնադնայով դնալ առաջ մինչև յերեսնիվայր ճեռքերի վրա հենվելը:

11. Մարմինը թեքել դեպի կողքերը զանազան յելման դրությունից՝ լրացուցիչ ճոճումներով (յելման դրություններն անցած նյութից) :

12. Լարված արտածալ՝ անշարժ հենարանով կամ ընկերոջ ոգնությամբ:

II. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ ՇՆՋԱ-ՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՑԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Վոտյուններ և վաղք տեղում և տեղից աստիճանաբար առագացնելով տեմպը՝ մինչև 3 րոպե:

III. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐ-ԺՈՒԹՅԱՆ, ԺՐՈՒԹՅԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԻՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅԱՆ

1. I աստիճանի ՊԱՊ-Ի առավոտյան մարմնամարզության 10 վարժությունները:

2. II աստիճանի ՊԱՊ-Ի կոմպլեքսի ազատ շարժումներ (առաջին չորս տակուը) :

3. Պասոսվկա մեծ և փոքր գնդակով՝ յերկուսով և խմբերով:

4. Նույնը յերկու գնդակով:

Բ. ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ՅԵՎ ԽՈԶԸՆԴՈՏՆԵՐ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ք Ա Յ Լ Ք

Խառը տեղաշարժ 1 կագ-ի վրա (քայլք, վաղք):

Նորմատիվ ցուցանիշ՝ Վաղք՝ 100 մ. պատանիները 15 վայրկյան, աղջիկները՝ 17 վայրկյան: Վաղք 1000 մ. պատանիները՝ 3 րոպե 50 վայրկյան: Վաղք 500 մ. աղջիկներ՝ 2 րոպե 20 վ. (ՅԵՊԱՊ. պատանիներ՝ 100 մ. 14,5 վայրկյան, 1000 մ. 3 րոպե 40 վայրկյան, աղջիկները՝ 100 մ. 16 վայրկյան, 500 մ. —2 րոպե 10 վայրկյան):

Հիմնական նյութ. Վաղքի տեխնիկայի ուսումնասիրություն մեջակ տարածությունների վրա. արագ վաղք. պատանիները՝ մինչև 200 մ., աղջիկները՝ մինչև 150 մ., դանդաղ վաղք. պատանիները՝ մինչև 2 կլմ., աղջիկները՝ մինչև 1 կլմ. (առանց ժամանակի հաշվառման):

Լրացուցիչ նյութ. Արգելքալազքի տեխնիկայի ուսումնասիրություն, խոչընդուների բարձրությունը մինչև 70 ամ., վաղք վայրում (կըսաս). պատանիները՝ մինչև 2 կլմ. աղջիկները՝ մինչև 1 կլմ.:

Ց Ա Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Նորմատիվ ցուցանիշ՝ Բարձրություն վաղքով. պատանիները՝ 1 մ. 10 ամ., աղջիկները՝ 95 ամ., յերկարություն վաղքով՝ պատանիները՝ 3 մ. 70 ամ., աղջիկները՝ 3 մ.:

(ՅԵՊԱՊ. պատանիները՝ բարձրություն՝ 115 ամ., յերկարություն՝ 4 մ., աղջիկները՝ բարձրություն՝ 100 ամ., յերկարություն՝ 3 մ. 10 ամ.):

Հիմնական նյութ. Բարձրության ցատկումների մարզում, վոտքերի մկրատաձև շարժումով կատարվող յերկարությամբ

շատկումի ուսումնասիրություն. վաղքով պատուհանով կատար-
վող ցատկումի ուսումնասիրություն. հենացատկումներ. «կծի-
կի», «կողացատկի» մարզում. բումի վրայով կատարվող «կողա-
ցատկի», ուսումնասիրություն:

Լրացուցիչ նյութ. Ցատկումներ կախից՝ ձողերից, պարա-
նից, ողերից և պատաճողից:

ՄԱԿԱՐՈՒՄ ՅԵՎ ՎԵՐԱՄԱԳՆՈՒՄ

Նորմատիվ ցուցանիշ. Պատանիներ՝ կախված դրությունից
անցնել հենման հետևյալ միջոցներից մեկն ու մեկով. ա) ծնկա-
տակից կախվելով (պատաճողը վարժվողի գլուխ բարձր է),
բ) արտահար գերանի վրա. աղջիկներ՝ ձգվել 5 անգամ բումից
խառն կախված դրությամբ (բարձրությունը 1 մ.), վոտքերը
հենած շվեդական նստարանին:

Հիմնական նյութ. Զգումներ և ծնկատակից կախեր տար-
բեր բարձրության գործիքի վրա. ձեռնադնա՝ վոտքերի շարժու-
մով. պարանների, ձողերի վրայով զանազան ձեռքով ազատ մա-
դրլցում. խառն կախի մեջ ձգումներ աղջիկների համար:

Լրացուցիչ նյութ. Նույն վարժությունները ձեռքը հասնող
(այսինքն՝ վերև պարզած ձեռքերի բարձրությամբ) գործիքի
վրա. ձեռնադնա՝ իրանը թափահարելու հետ միասին (պատա-
նիների համար): Միայն ձեռքերի ոգնությամբ պարանի և ձո-
ղերի վրայով մադլցում պատանիների համար:

Մ Ա Կ Ա Բ Ի Մ

Լրացուցիչ նյութ. Սողում կողքի վրա յերեսնիվայր և «պլաս-
տումական» ձեռով՝ հրացանի փոխարեն վայտ բռնած (կատար-
վում և չոր խոտի վրա):

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆ

Հիմնական նյութ. Ազատ կամ բեռով տեղաշարժ 1 մ. 50 սմ.
բարձրության գերանի, բռնմի վրայով, բեռը պատանիների հա-
մար մինչև 10 կլգ., աղջիկների համար մինչև 5 կլգ.:

Գ Ա Հ Ա Ի Կ Ա Խ Ե Ր

Նորմատիվ ցուցանիշ. Քայլել չափավոր խորդուբորդ վայ-
ռով. պատանիները՝ 5 կլմ—40 բռպեյում, աղջիկները՝ 3 կլմ—
30 բռպեյում:

(ՅԵՊԱՊ. պատանիները՝ 5 կլմ—38 բռպեյում, աղջիկները՝
3 կլմ—26 բռպեյում):

Հիմնական նյութ. Արգելակում «գութանով». դարձեր ամեն
մի կողմի վրա իջնելիս՝ վոտքով հենվելով. դարձեր տեղում
ցատկելով՝ փայտերի վրա հենված. քայլել խորը խոպանով մին-
չև 1 կլմ.:

Լրացուցիչ նյութ. Արգմաշարքի տարբեր՝ կազմել մեկ տո-
պան՝ ձեռքերին դահուուկներ բռնած. կատարել «դահուկները հագ-
նել» հրամանը. «Հավասարում» և «զգացու» հրամանը՝ դահու-
կային միատողան շարքում. կազմել հատասյուն և «Հատասյու-
նով քայլով մարշ» հրամանով առաջ շարժվել. թվարկում ջո-
կերով. ջոկերի բացազատումը հատասյունից՝ զուգասայուն և ջո-
կերով. հատասյունից բացազատվել մարտական կարգի և ընդ-
կերով. հատասյունից բացազատվել մարտական կարգի և ընդ-

կակառակը:

II. ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ՄԻՋՅՈՒՆԵՐ

Մ Ե Բ Յ Ա Լ Բ Ե Բ

Նորմատիվ ցուցանիշ. 16 կլգ. վամփշտարկղի տեղափոխու-
թյուն. պատանիները՝ 50 մ. հեռավորության վրա, իսկ աղջիկ-
ները՝ նույն ծանրությունը նույն հեռավորության վրա՝ յերկու-
սով:

(ՅԵՊԱՊ. պատանիները՝ 16 կլգ. ծանրություն—50 մ. հե-
ռավորության վրա՝ աղջիկները՝ «վիրավորի» տեղափոխություն-
յերկուսով):

Հիմնական նյութ. Բարձրացնելու և տեղափոխելու ժամա-
նակ տնտեսված շարժումների ուսումնասիրություն. զանազան
նական տեսակած շարժումների ուսումնասիրություն. զանազան
քաշի և ծավալի առարկաների հանձնումը կենդանի կոնվեյերով:

Լրացուցիչ նյութ . «Վիրավորներին» գետնից բարձրացնելու զանազան միջոցների ուսումնասիրություն , «Վիրավորների» փոխադրություն պատղարակներով :

III. ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ն Ե Տ Ո Ւ Մ

Նորմատիվ ցուցանիշ . 700 գր . ծանրության նոնակի նետում . պատանիները՝ 25 մ . , իսկ աղջիկները՝ 15 մ . հեռավորության վրա :

(ՅԵՊԱՊ . պատանիները՝ 30 մ . , աղջիկները՝ 20 մ .) :

Հիմնական նյութ . 700 գր . ծանրության նոնակի նետում հեռավորության վրա՝ զանազան գրությունից (կանգնած , ծնկած , պառկած) . նոնակի նետում հորիզոնական նշանի :

Լրացուցիչ նյութ . թեթևացրած (4 կլգ .) գունդը տեղից հրելու մարդում . ողակով գնդակը (1 կլգ .) տեղից նետելու ուսումնասիրություն : Ֆուտարովի գնդակը 30 մ . հեռավորության վրա ուղիղ գծով «տանել» և հարվածներ գնդակին վորքով :

V. ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնական նյութ . Մարշ մինչև 2 կլմ . յերթի ժամանակ շարավոխություններ կատարելով :

V. ՀԱԿԱԳԱԶ

Նորմատիվ ցուցանիշ . Փոխեփոխ քայլել և վաղել հակագազ հաղած 500 մ . տարածության վրա—200 մ . քայլել , 100 մ . վաղել և 200 մ . քայլել :

Գ. Խ Ա Ղ Ե Բ

1. Վալեյրոլ .
2. Բասկետբոլ .
3. Եստաֆետներ յերեք-չորս խոչընդոտներով .
4. Ֆուտբոլ :

Դ. ՑԻՉԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Թեմա . ՊԱՊ-ը խորհրդային Փիղկուլտուրայի միասնական սիստեմի հիմքն է : Խորհրդային Միության քաղաքացիների Փիղկական բազմակողմանի զարգացումը և նրանց պատրաստումը սոցիալիստական աշխատանքի և ԽՍՀՄ-ի պաշտպանության համար՝ Փիղկուլտուրայի խորհրդային սիստեմի հիմնական խընդիրն է :

Նորմատիվ ցուցանիչները , I և II աստիճանի ՅԵՊԱՊ-ի և ՊԱՊ-ի նորմաները վրապես խորհրդային Փիղկուլտուրայի սիստեմի հետևողականության կոնկրետ արտահայտություն , մի սիստեմ , վոր ընդգրկում է ԽՍՀՄ-ի քաղաքացիների բազմակողմանի Փիղկական զարգացումը , ոկսած մանկական հասակից՝ վերջացրած մեծահասակներով :

ԽԵԵՐՈՐԳ ՊԱՍՏՐԱԿԱՆ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորմատիվ ցուցանիշ . Ճիշտ կերպով կատարել II աստիճանի ՊԱՊ-ի աղատ շարժումներ մեկից մինչև 16 տակտը ներառյալ :

I. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ , ՎՈՐՈՆՔ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ ՄԿԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԶԱՐԳԱՅՆՈՒՄ ԵՆ ՈՒԺՆ ՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ :

1. Զգվել թեերի վրա զանազան բարձրության գործիքներից :
2. Ուղիղ մարմնի ճիշտ թեքումներ դեպի առաջ թեերը վերև պարզած դրությունից :
3. Իրանի դարձեր թեքումներով :
4. Իրանի թեքում դեպի առաջ—ճեռքերով ինքն իր վորերը բռնելով (II աստիճանի ՊԱՊ , 5 և 7 տակտեր) :
5. Իրանի թեքում դեպի յետ—ծնկած դրությունից (II աստիճանի ՊԱՊ , 18 և 19 տակտեր) :
6. Պառկած և ճեռքերի վրա հենված դրությունից դարձով :

անցնել կողքի վրա հենվելուն և վոտքի թաթերով դեպի առաջ հենվելու դրության (յելման դրությունը—յերեսնիվայր, յերկրորդ դրությունը՝ կողքի, յերրորդը՝ մեջքի) :

II. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՆՋԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐՆ ԱՄՐԱՊԼՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վաղքի մարզում՝ տես գործադրական վարժությունների նյութը :

III. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՇՎ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԺՐՈՒԹՅՈՒՆՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒՆ ՅԵՎ ԻՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅԱՆՆ

1. II «ՊԱՊ» մարմնամարդական կոմպլեքս մեկից մինչև 16 տակտը ներառյալ (առանձին տակտեր և միասին) :

2. Վոտքերի, թևերի և մարմնի համար վարժություններ քայլելու ժամանակ :

Բ. ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ՈՒ ԽՈՉԲՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Վ Ա Զ Ք

Նորմատիվ ցուցանիշ. Պատանիները՝ 100 մ. 14,5 վայրկյան, աղջիկները՝ 16 վայրկյան։ Պատանիները՝ 1000 մ. 3 րոպե 40 վայրկյան, աղջիկները՝ 500 մ. 2 րոպե 10 վայրկյան։

(ՊԱՊ. պատանիները՝ 100 մ. 13,5 վայրկյան, 1000 մ. 3 րոպե 10 վայրկյան, աղջիկները՝ 100 մ. 15 վայրկյան, 500 մ. 1 րոպե 50 վայրկյան)։

Հիմնական նյութ. Արագ վաղք. պատանիները՝ մինչև 200 մ., աղջիկները՝ մինչև 100 մ. (ստարտը՝ կանգնած և ծնկած դրությունից), սովորական և հանկարծակի հրամանով։ Վաղք. պատանիները՝ 1000 մ., աղջիկները՝ 500 մ., վաղք արհեստական (խոչընդուներով («ստիպլ-չեղ»)։ պատանիները՝ մինչև 100 մ.

2—4 խոչընդուներով, աղջիկները՝ 60 մ. 1—2 խոչընդուներով։

Լրացուցիչ նյութ. Արագ վաղք ավագու ու փափուկ գետնով և խորդուխորդություններով (թմբեր, առուներ և այլն). պատանիները՝ մինչև 60 մ., աղջիկները՝ մինչև 40 մ., վաղք լեռն ի վեր—15—20 աստիճան թեքությունից վոչ ավելի — պատանիները՝ մինչև 30 մ., աղջիկները՝ մինչև 20 մ.։

Յ Ա Տ Կ Ո Ւ Մ Ն Ե Ր

Նորմատիվ ցուցանիշ. Բարձրություն վաղքով. պատանիները՝ 1 մ. 15 սմ., աղջիկները՝ 100 սմ., յերկարություն վաղքով—պատանիները՝ 4 մ., աղջիկները՝ 3 մ. 10 սմ.։

(ՊԱՊ. պատանիները—բարձրություն՝ 1 մ. 25 սմ. յերկարություն՝ 4 մ. 50 սմ., աղջիկները—բարձրություն՝ 1 մ. 5 սմ., յերկայություն՝ 3 մ. 50 սմ.)։

Հիմնական նյութ. Բարձրությամբ կատարվող ցատկումների վոճերից մեկի («Խորեյն» կամ «Արելա-ամերիկյան») ուսումնասիրություն և կատարելազործում։ Ցատկումներ յերկարությամբ, վոտքերի մկրտածն շարժումով. հենացատկումներ՝ բարձրությամբ ու յերկարությամբ բարդացրած հենացատկումների մարզումը։

Լրացուցիչ նյութ. Կախից ցատկումներ խոչընդուներից, հենացատկումներ նժույգի վրայով—յերկարությամբ (վոտնաբաց)՝ պատանիների համար։

ՄԱԳԼՅՈՒՄ ՅԵՎ ՎԵՐԱՄԱԳԼՅՈՒՄ

Նորմատիվ ցուցանիշ. Պատանիները—ձգում 6 անդամ. աղջիկները—մագլցում ուղղաձիգ պարանի կամ ձողի վրայով վոտքերի ողնությամբ՝ 3 մ.։ (ՊԱՊ. պատանիները՝ ձգում 6 անդամ, աղջիկները՝ մագլցում 3 մ.։)

Հիմնական նյութ. Պատանիները՝ մագլցում ուղղաձիգ, թեք և հորիզոնական պարանի, սանդուխքի, բումի վրայով, միմիայն թերերի ողնությամբ, աղջիկները՝ նույնը—թերերի և վոտքերի ողնությամբ։ Բարձրացումներ ուժով և «ցունցով»—ձեռքերը վեր պարզած դրությունից հասնող պատաճողի վրա—պատանիների համար։

Լրացուցիչ նյութ. Սովորմ, հետը քաշ տալով 16 կլգ. ծանրության փամփշտարկղ (պատանիների համար) :

ՀԱՎԱՍԱՐԱԿԸՆՈՒԹՅՈՒՆ

Հավասարակշռություն եստաֆետներում խոչընդուներով :

Դ Ա Ղ Ո Ւ Կ Ե Ր

Նորմատիվ ցուցանիշ. Քայլել չափավոր խորդուքուրդ վայրով. պատանիները՝ 3 կլմ.—18 բողեյում, աղջիկները՝ 1 կլմ. —7 բողե 30 վայրկ :

(ՊԱՊ. պատանիները՝ 10 կլմ. 65 բողեյում, աղջիկները՝ 3 կլմ. 18 բողեյում) :

Հիմնական նյութ. Քայլելու և վազելու մարզում դահուկներով. պատանիները՝ վազք 5 կլմ., աղջիկները՝ 3 կլմ.: ՊԱՊ-ի նորմայի մարզման վերաբերյալ առաջադրություններ՝ արտառությանական կերպով պատրաստվելու համար :

Լրացուցիչ նյութ. Վայրեջք լեռներից, ձյան արհեստական խոչնորուներն անցնելով «հենումով» և «տելեմարկ» դարձերի (կոչտ կապանքի դեպքում) ուսումնասիրություն. ցատկումներ մինչև 5 մ. փոքրիկ (50—80 սմ.) տրամալիններից (միմիայն պատանիները) և նորվեգիական վոճի տեխնիկայի ուսումնասիրություններ:

II. ԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐ

Դ Ե Ր Յ Ա Լ Բ Ե Ր

Նորմատիվ ցուցանիշ. 24 կլգ. ծանրության փամփշտարկղը 4 անդամ բարձրացնել ուսի վրա և տեղափոխել 50 մ. (միմիայն պատանիները): (ՊԱՊ. պատանիները՝ 32 կլգ. ծանրության փամփշտարկղը 4 անդամ բարձրացնել ուսի վրա և տեղափոխել 100 մ.):

Հիմնական նյութ. Պատանիները՝ 32 կլգ. ծանրություն ունեցող տոպրակների և արկղների տեղափոխության մարզում, աղջիկները՝ 16 կլգ. ծանրության տեղափոխության մարզում 50 մ. հեռավորության վրա:

Լրացուցիչ նյութ. Մեկ ձեռքով մինչև 8 կլգ. և յերկու ձեռքով 24 կլգ. իրերի բարձրացում: Տոպրակներն ու փամփշտարկղները խոչնորուներից՝ ցանկապատից, առվից, թվուաներից անցկացնելը միայնակ և «կոնվեյերի» ձեռվ, վորի դեպքում աղջիկները պատանիներին միմիայն ողնում են:

Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ք Ա Շ

Լրացուցիչ նյութ. Պատանիները՝ մեկը մյուսին, զանազան միջոցներով, բարձրացնելն ու տեղափոխելը. աղջիկները՝ զանազան միջոցներով, յերկուսով մեկին բարձրացնելը և տեղափոխելը:

III. ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՐՁԱԿԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐ

Ն Ե Տ Ո Ւ Մ

Նորմատիվ ցուցանիշ. 700 գր. նոնակի նետում. պատանիները՝ 30 մ., աղջիկները՝ 18 մ. հեռավորության վրա (ՊԱՊ. պատանիները՝ 37 մ., աղջիկները՝ 25 մ.):

Հիմնական նյութ. Նոնակի նետում 10 մ. լայնության միջնացքով. նոնակի նետում խրամատից՝ կանգնած դրությամբ (խրամատի խորությունը 1 մ. է):

Լրացուցիչ նյութ. Ակավառակի նետում, թեթև և նորմալ ծանրության գնդի հրում:

IV. ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնական նյութ. Զոկի և զասակի կարեր, ոճաշարք, բացազառումներ. շարժում շարքով դահուկների վրա:

V. ՀԱԿԱԳԱԶ

Նորմատիվ ցուցանիշ. Քայլել հակագաղով մինչև 1500 մ. ապահանգություն:

Գ. Խ Ա Ղ Ե Բ

Վալեյրով, բամբետքով և ֆուտբոլ խաղալու տեխնիկայի կատարելագործում։ Խաղի դասավարություն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎՐԱ

Առանձին տարրեր և կոմբինացիաներ (յերկու, յերեք տարրերից)։

Լրացուցիչ նյութ։ (որինակելի վարժություններ)։

ա) Զուգափակացեր. 1) բարձրահեն, 2) թափառ, 3) արտանիստեր, 4) հենում մեջքին, վոտքերն ու կոնքը բարձրացնելով և արտանիստեր, 5) վոտնաբաց արտանիստից գլուխկոնճիր*, 6) վերելք զեպի բարձրահեն՝ արմունկներով հենված գրությունից, 7) վոտնառաջ, 8) վոտնայետ։

բ) Զանազան բարձրության զուգափակայտ. 1) բարձր փայտի յերկայնքով կախված և վոտնառաջ դրությունից թափառներ և վոտքերով շրջաններ, 2) արտանիստեր, 3) անցումներ զեպի հենում՝ ցածր փայտի վրա, լրացուցիչ շարժումներով, 4) ցածր փայտի վրա կանգնած դրությունից վոտքերով շարժումներ և շրջաններ բարձր փայտի վրայով։

գ) Պոտապով. 1) թափառ, 2) ձեռնադնա, 3) դարձեր, 4) վերելք ծնկատակից կախված, 5) վերելք ցունցով*), 6) արտահար*), 7) առաջարեր, 8) վարցատկեր յետնաթափում և առաջաթափում։

դ) Ռդեր. 1) թափառ, 2) ձոճվելը, 3) դարձեր, 4) ձգվելը* 5) կախի փոփոխություններ ուժով և թափով, 6) առաջարեր, 7) վերելք ծնկատակից կախված դրությունից*), 8) վարցատկ յետնաճուռամ և առաջաճուռամ։

Ծանօթություն. — 1. Աստղանիչ վարժություններն աղջիկների համար չպետք է դորժադրվեն։

2. Բոլոր շարժումներն անհրաժեշտ են կատարել յերկու կողմը։

3. Աղջիկների համար, բացի դորժիքային մարմամարզությունից, անհրաժեշտ են նաև ոփթմիկ և պլաստիկայի բնույթի վարժություններ։

Թեմա. Սպորտի ամառային և ձմեռային ձևերի մարզման հիմնելուները (թեման անցնում են ամառվա և ձմեռվա սեղոնի ակղբին)։

Մարզման պլանը, ուժիմը և ինքնապերահսկողությունը։

Տասերորդ գասարան

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորմատիվ ցուցանիշ. Ճիշտ կերպով կատարել II աստիճանի ՊԱՊ-ի աղաս շարժումները—32 տակտ։

I. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՇԲ ԱՄՐԱՊՆԴԱՒՄ ԵՆ ՄԿԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԶԱՐԳԱՅՆՈՒՄ ԵՆ ՈՒԺՆ ՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անհատական աշխատանք և խմբական վարժություններ՝ պատանիները՝ 5 կլի., աղջիկները՝ 3 կլի. ծանրության մեղքուներով (նստելու և քոնելու բոլոր ձեռերը կատարվում են ավելացրած տարածությամբ և արագացրած աշխատանքով)։

2. Թերերի վրա կախվել և ձգվել—վոտքերի շարժումով (մասայական կատարում)։

3. Առանձին տարրեր II աստիճանի ՊԱՊ-ի աղաս շարժումներից (1—16 տակտերի կրկնություն, 17—32 տակտի ուսումնակրություն)։

4. Լարված արտածալ ուղիղ կանգնած և ծնկած դրությունից, անշարժ հենարանով և վարժակի ողնությամբ։

5. Իրանը շարժել զեպի առաջ, կողքերը և յետ—վոտքը արձուությամբ հենելով։

6. Կանգնել շվեդական պատի առաջին ձողի վրա, յերեսը զեպի պատը դարձրած, ձեռքերով ուսերի բարձրության վրա գտնվող ձողից բռնած՝ ծալել իրանը, փոխելով բռնվածքն ավելի ցածր ձողից և ուղղվել, ձեռքերը փոխելով նախորդ բռնվածքի տեղը։

7. Շվեդական պատի վրայից մեջքով կախված դրությունից

կատարել «առաջարեր», պահելով վոտքերն ուղղանկյուն, պատահիները՝ 3 վայրկյան, աղջիկները՝ 1 վայրկյան:

II. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐ-
ԺՈՒՆՈՒԹՅԱՆ, ԺՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՄԱԿԵԼՈՒՆ ՅԵՎ ԻՐ ՇԱՐ-
ԺՈՒՆԵՐԻՆ ՅԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅԱՆԸ

1. II աստիճանի ՊԱՊ-ի կոմպլեքսի ազատ չարժումների կոմ-
բինացիա—17-ից մինչև 32 տակտը ներառյալ:

Բ. ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ՅԵՎ ԽՈՉԲՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԻՋՅԱՅՐ

Վ Ա Զ Ք

Նորմատիլ ցուցանիշ. Պատանիները՝ 100 մ. 14 վայրկ., աղջիկները՝ 15,5 վայրկյան, պատանիները՝ 1000 մ. 3 րոպե 30 վայրկյան, աղջիկները՝ 500 մ. 2 րոպեյում:

(ՊԱՊ. պատանիները՝ 100 մ. 13,5 վայրկ., 1000 մ. 3 րոպե 10 վայրկ., աղջիկները՝ 100 մ. 15 վայրկ., 500 մ. 1 րոպե 50 վայրկյանում):

Հիմնական նյութ. Արագ վաղք—պատանիները մինչև 400 մ., աղջիկները՝ մինչև 200 մ., վաղելաղք ձեռքներին փայտ բոնած—մինչև 60 մ., վաղքն սկսելու վերջացնել պառկած դրությունից. դանդաղ վաղք—պատանիները՝ մինչև 3 կլմ., աղջիկները՝ մինչև 2 կլմ., վաղք արհեստական խոչնղոտներով (ստիլ-չեղ). պատանիները՝ մինչև 200 մ.—5 խոչնղոտով, աղջիկները՝ մինչև 100 մ.—4 խոչնղոտով:

Լրացուցիչ նյութ. Արդելքավաղք՝ մինչև 60 մ-ի վրա, 5 արդելքներից. արդելքների բարձրությունը՝ պատանիների համար մինչև 100 սմ., աղջիկների համար մինչև 70 սմ., վաղք տեղան-քում (կրոսս)՝ պատանիները՝ մինչև 3 կլմ., աղջիկները՝ մինչև 1,5 կլմ., առանց ժամանակի հաշվառման և ժամանակի հաշվա-ռումով:

Ց Ա Տ Կ ՈՒ Մ Ն Ե Ր

Նորմատիլ ցուցանիշ. Բարձրություն վաղքով—պատանինե-
րը՝ 1 մ. 20 սմ., աղջիկները՝ 1 մ.: Յերկարություն վաղքով—

պատանիները՝ 4 մ. 20 սմ., աղջիկները՝ 3 մ. 20 սմ.:

(ՊԱՊ. պատանիները՝ բարձրություն վաղքով 1 մ. 25 սմ., աղջիկները՝ 1 մ., յերկարություն վաղքով—պատանիները՝ 4 մ. 50 սմ., աղջիկները՝ 3 մ. 50 սմ.):

Հիմնական նյութ. «Խորեյն» կամ «Արևելա-ամերիկյան» վո-
ճով բարձրությամբ ցատկումների կատարելագործում. Հենա-
ցատկումներ՝ ցատկումներ խորությամբ—պատանիները՝ մինչև
2 մ., աղջիկները՝ մինչև 1 մ. 20 սմ., բարձրությունից՝ կախ-
ված, նստած և կքանիստ դրությունից դեպի առաջ, յետ և
կողքի:

Լրացուցիչ նյութ. Վարցատկ՝ առաջաճոճում և յետաճո-
ճում (ողեր, տրապեցիա). ցատկումներ կախից, առաջ, պարանի
վրայից, «կասկադ» պարանի վրայով և 1 մ. բարձրության կոչտ
խոչնղոտի վրայով (միայն պատանիները). Հենացատկում
խոչնղոտի յերկարությամբ՝ վոտքերը կծկելով (միայն պատանի-
ները):

ՄԱԳԼՅՈՒՄ ՅԵՎ ՎԵՐԱՄԱԳԼՅՈՒՄ

Նորմատիլ ցուցանիշ. Մագլյում պարանի վրայով. պատա-
նիներն—առանց վոտքերի ոգնության 3 մ. կամ կախից ուժով
հենաճան անցնել. աղջիկները՝ մագլյում պարանի վրայով վոտ-
քերի ոգնությամբ 4 մ. կամ թերերի վրա ձգվել կախված դրու-
թյունից 2 անգամ—մինչև աչքերի բարձրությունը:

(ՊԱՊ. պատանիները՝ 6 անգամ ձգվելով, աղջիկները՝ մա-
գլյում պարանի կամ ձողի վրայով՝ 5 մ.):

Հիմնական նյութ. Նորմատիլ ցուցանիշին տիրապետելու
վարժությունների մարզում, ոգտագործելով 7—9 դասարանների
նյութերը:

Դ Ա Հ Ո Ւ Կ Ն Ե Ր

Նորմատիլ ցուցանիշ. Բայլել խորդուբորդ վայրով—պատա-
նիները՝ 5 կլմ.—30 րոպեյում, աղջիկները՝ 3 կլմ.—21 րոպե-
յում:

(ՊԱՊ. պատանիները՝ 10կլմ.—65 րոպեյում, աղջիկները՝ 3
կլմ.—18 րոպեյում):

Հիմնական նյութը. Ստուգել վաղքի տեխնիկան ու վոճը և վորոշել մարդկելու ուղղությունն ու որացույցը՝ ՊԱՊ-ի նորմաների քննությանը պատրաստվելու համար։ Մարդում—պատանիներին՝ 10 կլմ. և աղջիկներին՝ 3 կլմ. վաղքի համար։

Լրացուցիչ նյութը. Վայրեջք լեռներից՝ սովորական կեցվածքով և մարմնի ծանրությունը փոխանցելով առաջ դցվող կամ յետ դրվող վոտքի վրա. դարձ «Խրիստինիա» վոճով (ամուր կապանք լինելու դեպքում), ապա վայրեջք՝ «ոճաշարով» կամ կանգ. բարձրանալ սարն ի վեր «վրդապներով»։ Քայլել զգալի խորդուբորդ վայրով—պատանիները՝ մինչև 5 կլմ., իսկ աղջիկները՝ մինչև 3 կլմ., քայլել թփուտով և խոր խոպանով 2 կլմ.։

II. ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՅՑՆԵԼՈՒ ՅԵԿ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԻՋԱՅՆԵՐԻ

Մ Ե Բ Ա Լ Բ Ե Բ

Նորմատիվ ցուցանիշ. 32 կլգ. ծանրության փամփշտարկով 4 անգամ բարձրացնել ուսին և տանել 50 մ. հեռավորության վրա (առանց ժամանակի հաշվառման և միայն պատանիները)։

(ՊԱՊ. պատանիները՝ 32 կլգ. ծանրության փամփշտարկով 4 անգամ բարձրացնել ուսի վրա և տանել 100 մ. հեռավորության վրա)։

Հիմնական նյութը. Նախորդ դասաբանի վարժությունները։

III. ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՅԵԿ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՄԻՋԱՅՆԵՐԻ

Ն Ե Տ Ո Ւ Մ

Նորմատիվ ցուցանիշ. 700 գր. նոնակի նետում. պատանիները՝ 35 մ., աղջիկները՝ 22 մ. հեռավորության վրա։

(ՊԱՊ. պատանիները՝ 37 մ., աղջիկները՝ 25 մ.)։

Հիմնական նյութը. Նոնակը նետել հորիզոնական նշանին, 2 մ. լայնության իրամատի մեջ (յերկարության չափն աղատ է)։

պատանիները՝ 20 մ., աղջիկները՝ 15 մ. հեռավորություններ։

Նախորդ տարվա ուսման վարժությունները։

Լրացուցիչ նյութ. Թեթևացրած գնդի հրում, սկավառակի, ողով գնդակի և նիղակի նետում։

IV. ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՈՒԹՅՈՒՆ

Հիմնական նյութը. Դասակները բացազատում մարտակարգի, պաշտպանվել հեծելաղորի, ավելացիայի և մոտոմեխ գորամասերի անակնեալ հարձակումից. մարշ դահուկներով՝ յերթի ժամանակ շարավորխություններ կատարելով։

V. ՀԱԿԱԳԱԶ

Նորմատիվ ցուցանիշ. Հակագազը հագնել անակնեալ հրամանով և արագ վաղեվազք մինչև 30 մ. հեռավորության վրա, վաղքն սկսել հակագազը ճիշտ հագնելուց հետո։

Գ. Խ Ա Հ Ե Բ

9-րդ դասարանի խաղերի մարզում և բեյս-բոլ խաղի ուսուցում։

I. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎՐԱ

Տարրերի և կոմբինացիաների (3—4 տակտ) ուսումնասիրություն։

Լրացուցիչ նյութ. (որինակելի վարժություններ)։

ա) Զուգափայտ. 1) Գլուխկոնծի, 2*) վոտանաբաց արտակատից, սեղմումով ուսերի վրա կանգնել, 3*) բարձրահեն՝ սկսպկայով, 4) թափանցներ և շրջաններ, 5) առաջարելը, 6) կծիկ 2 փայտի վրայով, 7*) վոտնաբաց ցատկում ծայրերից։

բ) Պտտաձող. 1) դարձեր, կախում, 2) բարձրահենից վուաքերը թափանցով անցկացնել պտտաձողի վրայից մինչև բարձրահեն՝ յետում, 3) վերելք ծնկատակի վրա յետկախում, 4*) վերելք ցունցով, 5*) վերելք հեծնելով, 6*) արտահարներ, 7) պտույտներ, 8) վերելք սկսպկայով, 9) առաջարելը։

7) Ողեք. 1*) վերելք ցունցով, 2) շրջադարձեր, 3*) վերելք ուժով, 4*) առաջարեկը, 5) ճոճ դարձերով, 6) ճոճ առանց հըրման :

Դ) Նժույդ լայնությամբ բոնակներով (միայն պատահիները). 1) բարձրահեն, 2) վոտքերի կիսաշրջաններ, 3) վոտքերով շրջաններ դեպի յետ, 4) վոտքով շրջաններ դեպի առաջ, 5) աշխատանք տեմպում :

Ծանոթություն.—(Տես 9-րդ դասարան) :

Դ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

I քեմա. Խորհրդային ֆիզիկական կուլտուրայի շարժումը միջազգային հեղափոխական բանվորական սպորտշարժման առաջավոր զոկատն է :

Ինտերնացիոնալիզմը, վորպես խորհրդային ֆիզկուլտ շարժման հիմնական սկզբունք :

ԿՄԻ-ն (Կարմիր Սպորտինտերնը) և ԼՍԻ-ն (Լյուցերնի Սպորտինտերնը), նրանց ծագումը և նրանց խնդիրների դասակարգային տարրերությունը :

«Սպորտում բուրժուական ռեկորդներին հասնելու և անցնելու» լոգունդը, վորպես կոնկրետ ծրագիր խորհրդային ֆիզկուլտ շարժումն աշխարհում ամենաառաջավոր շարժում դարձնելու համար :

Խորհրդային մանկական սպորտը և նրա դերը խորհրդային սպորտսմեններին աշխարհում լավագույն սպորտսմեններ դարձնելու գործում :

II քեմա. Ֆիզկուլտուրայի նշանակությունն աղջկա որգանիզմի համար (բժշկի զրույցն աղջիկների հետ) :

Ֆիզկուլտուրայի նշանակությունն աղջկա Փիզիկական ընդհանուր զարգացման համար : Վորովայնի խոռոչի ու կոնքի հատակի մկանների ամրացման նշանակությունը հղիության և ծննդի շրջանի համար (հատուկ Փիզիկական վարժություններ) :

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՑՈՒՄՆԵՐ

Ֆիզկուլտուրան միջնակարգ դպրոցում ճիշտ հիմքերի վրա դնելու կարևորագույն պայմանը պետք է լինի առողջապահության տեսակետից դպրոցական և ուսումնական-դաստիարակչական աշխատանքի կարգավորումը :

Այդ աշխատանքին են վերաբերում հետևյալ միջոցառումները :

1) Ողակուխությունը, համապատասխան լուսավորությունը և ուսումնական ու ոժանդակ բոլոր շենքերը մաքուր վիճակում պահելը. դպրոցի սալքավորման, սպորտ-ինքնարի, գործիքների և կահկարասիների ընտրությունն ու հարմարեցումն աշխարհական տարիքին, կարողության և առողջական դրությանը. անվտանգության աղաքովումը դադրյահների մոտ. համապատասխան շենքերի ու սպորտ-հրավարակների պատրաստումը՝ ֆիզիկական վարժությունների դասերի և ընդմիջումների համար :

2) Ուսումնական-դաստիարակչական աշխատանքի ռացիոնալ չափավորումն որվա, շաբաթվա, ամսվա, ուսումնական տարվա ընթացքում :

3) Առաջին հնարավորության դեպքում Փիզիկուլտուրայի պարապմունքների քացոթյա կատարումը :

4) Դասերի ընդմիջումների բացոթյա անցկացումը :

5) Ֆիզկուլտուրապեների անցկացումը դասերի ժամանակ և պարապմունքներից առաջ մարմնամարզության կատարումը :

6) Նպաստել ընդհանուր գպրոցական ռեժիմի կազմակերպությանը և աշակերտների կենցաղի առողջապահությանը :

Բժիշկը Փիղկուլտուրայի դասատուի և դասարանի ղեկավարությանը հետ միասին պետք է մասնակցի այդ միջոցառումների կազմակերպմանը՝ ներդրամիւրով մանկավարժական կուեկտիվին, դպրոցի աշակերտներին, ծնողներին և հասարակայնությանը :

Սանիտարական-առողջապահական դաստիարակության աշխատանքը գպրոցում անց եւ կացվում մասամբ դասավանդման պրոցեսում՝ Փիղկական վարժությունների դասերին, մասամբ ել ուսումնական-դաստիարակչական աշխատանքի այլ հատվածներում : Ֆիղկուլտուրայի դասատուն պատասխանատու յեւ այն առողջապահական ունակությունների պատվաստման և ամրապնդման համար, վորոնք անմիջորեն կապված են Փիղկուլտուրայի դասավանդման հետ, որինակ՝ մաքրասիրություն, կանոնավոր կեցվածք, խորը չնչառություն և այլն :

Ինչ վերաբերում եւ սանիտարական-առողջապահական այլ ունակություններին, ապա՝ Փիղկուլտուրայի դասատուն բժշկի և մանկավարժական ամբողջ կուեկտիվի հետ միասին պետք եւ հետեւի այլ ունակությունների կատարմանը և ամրապնդի այն ունակությունները, վորոնք դեռևս հաստատուն կերպով մուտք չեն գործել աշակերտների առորյա վարքի մեջ :

Ֆիղկուլտուրայի դրվածքը միջնակարգ գպրոցում պետք է կապված լինի վորոշ դիսցիլինների՝ առանձնապես աշխատանքի, բնադիտության, գեղարվեստական դաստիարակության և ուազմական գործի հետ : Որինակ, կապն աշխատանքի հետ իրագործվում եւ աշակերտների այնպիսի հատկություններն ու ունակություններն ամրացնելով, վորոնք նպաստում են լավագույն կերպով տիրապետելու աշխատանքային դանապան պրոցեսներին՝ ճշությանը և աչքաչափին, շարժումների արագությանն ու ճարպկությանը, կարողանալ իր ուժերը չափավորել և գրավել խնայողական և նպատակահարմար աշխատանքային դրություններ՝ հարմարեցնելով պարապմունքների տեղերն աշակերտների հասակին և կարողության, արհեստանոցներում անցկացնել առողջապահական միջոցառումներ՝ ողափոխություն, Փիղկուլտուրայի անցկացումը և այլն :

Կապը բնական դիտությունների հետ իրագործվում եւ մարդու անատոմիան և Փիղկուլոգիան, սնունդը և այլ հարցերն ու-

սումնասիրելիս : Ֆիղկուլտուրայի դասատուն պետք և ողտագործի աշակերտների գիտելիքները Փիղիկական վարժությունների անատոմիական-Փիղիոգիական հիմնալորման, ինքնավերահսկողության և մարդման ղեպքում : Կապը գեղարվեստական դաստիարակության (յերգ, յերաժշտություն, թատրոնական խմբակներ) հետ իրադորձվում ե յերգի և յերաժշտական նյութի ոգտագործումով՝ Փիղկուլտ յելույթները ձևավորելու և Փիղիկական վարժությունների պարապմունքներն անցկացնելու համար :

Ֆիղկուլտուրայի կապը ուազմական գործի հետ պետք եւ արտահայտվի շարային պատրաստության հիմնական տարրերի և սապմական գործադրական ունակությունների յունացմամբ : Բացի դրանից, ուսման ժամանակից ղուրս պետք եւ լայնորեն կերպովին ուազմականացված խաղերը վայրում ե յերթերը՝ ողտագործելով բոլոր այն ուազմական գործադրական ունակությունները, վոր աշակերտները ձեռք են բերել Փիղիկական վարժությունների դասերին : Պետք եւ հատուկ ուշադրություն դարձնել վճռականության, տոկունության, դիմացկանության, կողմնորոշվելու, այս կամ այն խոչընդոտը հաղթահարելիս անհրաժեշտ Փիղիկական ունակություններն արագ կերպով գործադրել կարողանալու վրա, այսինքն՝ այն հոգեֆիղիկական հատկությունների վրա, վորոնք անհրաժեշտ են մեր հայրենիքի ապագա պաշտպանին :

Ուազմական ղեկավարի հետ միասին պետք եւ հաստատուն ունակություններ և գիտելիքներ տալ հակագաղի և հրացանի հետ վարդելու համար :

Յուրաքանչյուր դասարանի ծրագրային նյութն ունի հետեւյալ ստորաբաժնումները :

1. Ֆիղիկական վարժություններ :

2. Ֆիղկուլտուրայի վերաբերյալ տեսական տեղեկություններ :

3. Ֆիղկուլտ-կազմակերպական և սանիտարական-առողջապահական ունակություններ :

Ծրագրի առանցքային մասը Փիղիկական վարժություններն են : Տեսական տեղեկությունները մացված են ծրագրի մեջ, վորպեսի աշակերտները յուրացնեն խորհրդային Փիղկուլտու-

դայի նպատակներն ու խնդիրները և ծանոթանան Փիղիկական վարժությունների ու սպորտի տեսական հիմնավորումներին:

Ֆիղկուլտ-կազմակերպական և սանիտարական-առողջապահական ունակությունները դաստիարակում են Փիղիկական վարժությունների և Փիղկուլտուրայի վերաբերյալ անցնելիք նյութի կապակցությամբ: Ֆիղիկական վարժությունների ստորաբաժանման հիմքը կազմում են աճող սերնդի բազմակողմանի Փիղիկական դարձայման և առողջության ամրապնդման խնդիրներն ու վարժությունների գործադրականությունը, այսինքն՝ ուղղակի այն, ինչ ամենից բնորոշն է «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» կոմպլեքսի համար: Սրա համեմատ ել Փիղիկական վարժությունները բաժանվում են յերկու հիմնական հատվածների.

I Հատված. Ընդհանուր նախապատրաստական վարժություններ, վորոնք նպաստում են որգանիզմի ընդհանուր բազմակողմանի դարձայմանը:

II հատված. Գործադրական վարժություններ, վորոնք դաստիարակում են աշխատանքային և մարտական պայմաններում կիրառվող ունակություններ:

Ընդհանուր նախապատրաստական հատվածում գետեղլած են այն վարժությունները, վորոնք նպաստում են դիմավորապես մկանների և արյան շրջանառության ու չնչառության որգանների դարձայման ու ամրապնդմանը և շարժումների ճշտության ու ոփթմին՝ դաստիարակելով տարածության մեջ կողմնորոշվելու հատկություն, ժրություն և իր շարժումներին դիտակցորեն տիրապետելու ունակություններ:

Վերոհիշյալի համաձայն, հատվածն ունի հետեւյալ խմբավորումները, վորոնց գլխավոր նպատակն ե.

ա) զարդացնել և ամրապնդել մկանային առանձին խմբերը (վարժություններ, վորոնք զարգացնում են ուժն ու ձկունությունը). բ) ամրապնդել արյան շրջանառության ու չնչառության որգանները. գ) դաստիարակել ու կատարելագործել շարժունություն, ժրություն և իր շարժումներին տիրապետելու հմտություն:

Գործադրական վարժությունների հատվածի մեջ մտնում են այն Փիղիկական վարժությունները, վորոնք կյանքում ունեն անմիջական գործնական (գործադրական) կիրառում, ինչպես և այն

Փիղիկական վարժությունները, վորոնք ողնում են տիրապետելու այս կամ այն գործնական վարժության տեխնիկային:

Գործադրական բնույթի վարժությունների ուսումնասիրությունն ու նրանց կիրառումը՝ փոփոխվող և բարդ պայմաններում (որինակ՝ սպորտային կամ ռազմականացված խաղերում և տեղանքում յերթերում) վոչ միայն մկանների ու ներքին որգանների գարգացումն ու ամրապնդումը բարձր աստիճանի յեն հասցնում, այլև կատարելագործում՝ են ուժը, շարժումների ճշտությունն ու ներդաշնակությունը, աշակերտների մեջ առաջ բերելով վճռականություն, տոկունություն, համարձակություն և հոգեֆիղիկական այլ արժեքավոր հատկություններ: Սակայն աշակերտների ուշադրությունը գլխավորապես պետք ե ուղղել այդ ձերի վարժությունների գործադրական նշանակության վրա:

Գործադրական վարժությունների հատվածն ըստ իրար նման հատկանիշների՝ բաժանված ե հետեւյալ խմբերի.

1. Տեղափոխության և խոչընդունելու հաղթահարելու միջոցներ. քայլք, վալք, ցատկումներ, հավասարակշռության վարժություններ, մագլցումներ և վերամադլցումներ, սողում, դահուկներով քայլք¹⁾:

2. Ծանրություններ բարձրացնելու և տեղափոխելու միջոցներ.

ա) մեռյալ բեռ.

բ) կենդանի քաշ:

3. Պաշտպանմելու և հարձակվելու միջոցներ.

ա) նետում, բ) մարտի և դիմադրության տարրեր:

4. Շարային պատրաստություն. շարքի տարրերը (շարքեր կաղմել, շարափոխություններ և տեղաշարքեր):

5. Հակագաղ:

Շարային պատրաստությունն ու հակագաղը կազմում են գործադրական վարժությունների առանձին բաժիններ և միացած չեն քայլքին միայն այն պատճառով, վոր նրանք աճող սերմութի Փիղիկական պատրաստության ընդհանուր սիստեմի մեջ առանձնապես կարևոր նշանակություն ունեն և Փիղկուլտուրայի դպրոցական աշխատանքի պրակտիկայում կիրառվում են իրեւ ինքնուրույն վարժություններ:

1) Լողաւը, թիավարելը և չմշկելը ծրագրի մեջ չեն մտել, վորովհետեւ այդ ձերն ուսումնասիրում են ուսումնական ժամանեցիք դուրս:

Շարժական և սպորտային խաղերը կազմում են լնքնուրույն խումբ։ Վերոհիշյալ ամբողջ պատրաստության հիման վրա բարձր դասարաններում ծավալվում ե ուսուցումը սպորտի այն առանձին ձևերի վերաբերյալ, վորոնք չեն մտնում ՊԱՊ-ի կոմպետքսի մեջ, որինակ, թեթև առլենտիկայի առանձին ձևերը, դորժիքային մարմամարդությունը, սպորտային խաղերը։

Սպորտի բոլոր ձևերի վերաբերյալ ամբողջ խորացրած մարզումը կատարվում է Փիղկուլտուրայի դպրոցական խմբակի առանձին սեկցիաներում՝ կամ մանկական սպորտային դպրոցում։ Կառաջին հերթին ուղղված է ՅԵՊԱՊ-ի և ՊԱՊ-ի կրծքանշանի վարժությունների կոմպլեքսը լիակատար կերպով տիրապետելու նպատակին՝ նայած աշակերտների տարիքին։

Մըրգրային նյութի մեջ զեկույլար գեր ունի գործադրական վարժությունների հատվածը։

Ժիղկուլտուրայի աշխատանքի կազմակերպումը, պլանավորումը և հաշվառումը դպրոցում անց են կացվում հետևյալ հիմունքներով։

1. Ֆիղկուլտուրայի դասառուն պետք է աշակերտներին լիովին մարսել տա ծրագրի հիմնական նյութը, վորը յուրաքանչյուր դասարանի համար վորոշում և նորմատիվ ցուցանիշներին պատրաստովելը և այլ նորմաները լրացնելը։

Մըրգրի լրացուցիչ նյութը դասառուն պետք է ալանդի միայն այն գեպքում, յեթե աշակերտները լիակատար կերպով յուրացրել են հիմնական նյութը։

2. Ֆիղկուլտուրայի դասերը յերբեք յենթակա չեն կրծատման և չեն փոխարինվում այլ դասերով, կամ Փիղկուլտ տոնակատարությունների ու մրցակցությունների պատրաստությամբ և այլն։ Ֆիղկական վարժությունների յերկու դասի միացում կատարել թույլ ե տրվում միայն դահուկային պարապմունք անցկացնելու համար։

3. Դահուկային դասերն 9-րդ և 10-րդ դասարաններում պետք է անցկացնել դպրոցին մոտիկ պարապմունքների համար համապատասխան պայմաններ լինելու գեպքում, խորդուրուէ վայրում, լեռներում և այլն։ Յեթե դպրոցին մոտիկ այդպիսի պայմաններ չկան, առաջուց դահուկային վագքի բավականին հմտություն ու տեխնիկա ունեցող 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտների հետ, ձմռան սկզբին, պետք է պարապել մեկ-

յերկու որինակելի հրահանդչական դաս, տարով արտառւաման միջոցին կատարվող դահուկային սխմեմատիկ մարզման պլանը՝ II աստիճանի ՅԵՊԱՊ-ի կամ ՊԱՊ-ի կոմպլեքսի (նայած աշակերտների տարիքին) նորմատիվ ցուցանիշներին պատրաստվելու և այդ նորմաները լրացնելու համար, իսկ այնուհետև ձմռան սեղոնի յերկրորդ կեսում անցկացնել հաշվառման դաս։

4. Յուրաքանչյուր գասարանի ծրագրում նյութը տրված է այն յենթագլությամբ, վոր աշակերտները նախորդ գասարանների նյութը յուրացըրել են։

Հակառակ պարագային Փիղկուլտուրայի դասառուն պարտավոր և գոնե համառու մշակել նախորդ գասարանի նյութը։ Ֆիղկուլտուրայի դասառուն դասավանդման միջոցին պետք է ողափի վոչ միայն տվյալ դասարանի, այլև նախորդ գասարանների նյութից։

5. 5, 6 և 7-րդ դասարանների Փիղկական վարժությունների դասերին աղջիկները բաժանվում են առանձին յենթախըմբերի դասի այն մասերի համար, վորոնք պահանջում են վարժությունների հասուլ ընտրություն և տարբեր բեռնվածություն։ 8, 9 և 10-րդ դասարաններում նպատակահարմար ե տղաների և աղջիկների համար անցկացնել առանձին դասեր։

Այս նպատակով յերկու զուգընթաց դասարանների պատասխներն ու աղջիկները կարող են միացվել առանձին-առանձին Փիղկուլտուրայի յերկու դասառունների զեկավարությամբ՝ տարբեր տեղերում առանձին պարապելու համար, կամ թե մի մասը պարապում է Փիղկական վարժություններով, իսկ մյուս մասը՝ մյուս դասով, որինակ՝ ռազմական գործի դասով։

6. Աշխատանքի արտագրողականությունը բարձրացնելու և աշակերտների հետաքրքրությունը բավարարելու համար ցանկալի յե միջնակարդ դպրոցի յուրաքանչյուր դասարանի աշակերտներին, նկատի ունենալով նրանց Փիղկական վարդացումն ու առողջությունը, բաժանել հետևյալ խմբերի։

Առաջին խումբ՝ այն լիակատար առողջ աշակերտները, վորոնց Փիղկական նվաճումներով իրենց դասարանից բարձր են կանգնած։

Յերկրորդ խումբ՝ այն լիակատար առողջ աշակերտները, վորոնք ունեն Փիղկական նվաճումներ իրենց դասարանի սահմաններում։

Յերբորդ խռոմք՝ այն առողջ աշակերտները, վորոնց Փիզի-կական նվաճումներն իրենց դասարանից ցածր են:

Չորրորդ խոմք՝ այն աշակերտները, վորոնք, անկախ իրենց Փիզիկական նվաճումներից, առողջության տեսակետից ունեն մի շարք թերություններ: Այդ բաժանման համեմատ ել դասատուն յուրաքանչյուր խմբի համար ընտրում ե համապատասխան Փիզիկական վարժություններ՝ ըստ դժվարության և քանակի:

7. Աշակերտներին պարագմունքներից մասնակիորեն ազատելիս բժիշկը ե մատնանշի նրանց այս կամ այն վարժություններով սահմանափակվելու չափը և դասարանական մատյանում նշանակի նրանց թույլատրելի քենաւորման աստիճանը:

Մասնակիորեն ազատված աշակերտները պետք է գտնի են բժշկի և Փիզիկուլտրայի դասատուկ հսկողության տակ: Տեսական պարագմունքները պարտադիր են բոլորի համար:

Ֆիզիկական վարժությունները պլանավորվում են, նայած այն պարագմաններին ու հանգամանքներին (պարագմունքներին հատկացված ժամերին, պարագմունքների տեղին, սարքավորմանն ու ինվենտարին, սեղոնայնությանը, աշակերտների պատրաստությանը), վորոնց մեջ տեղի յե ունենալու աշխատանքը:

Պլանը կազմվում ե հետեւյալ բաժինների վերաբերյալ.

1. Բնդհանուր նախապատրաստական վարժություններ:

2. Գործադրական վարժություններ և սպորտի առանձին տեսակներ:

3. Խաղեր:

4. Ֆիզկուլտուրայի տեսության վերաբերյալ թեմաներ:

Առաջին հերթին անհրաժեշտ ե պլանավորել ամբողջ ուսումնական տարվա նորմատիվ ցուցանիշները և նշել նրանց հաշվառման (լրացման) ժամկետները, վորովհետև նյութի հետազալպատճենումը կախված ե դրանից:

Առանձին քառորդների մեջ մտցվում են այն նորմատիվ ցուցանիշները, վորոնց կատարումը կախված ե սեղոնից. որինակ, վազքով յերկարությամբ ցատկումը և նոնակի նետումը պետք է մտցնել առաջին և չորրորդ քառորդի մեջ, դահուկները՝ յերրորդ քառորդի մեջ: Նորմատիվ ցուցանիշները բաշխելուց հետո նշանակվում ե յուրաքանչյուր հատվածին հատկացնելիք անհրաժեշտ ժամանակը՝ նայած առանձին դասարանների համար այդ

քաժնի ունեցած նշանակությանը և ընտրվում ե նյութ ըստ հատվածների: Նյութը պլանավորվում ե կես տարվա համար ըստ քառորդների:

Վարժությունների ընտրության ժամանակ անհրաժեշտ ե առաջին հերթին բաշխել ծրագրի հիմնական նյութը, իսկ այնուհետև, նաև համապատասխան լրացուցիչ նյութը:

Յերկրորդ հատվածի համար ամենից առաջ ընտրվում ե ծրագրի այն հիմնական նյութը, վորուն նպաստում ե նորմատիվ ցուցանիշների տիրապետմանը, իսկ յերկրորդ հերթին՝ լրացուցիչն նյութը: 9 և 10-րդ դասարանների համար, նայած աշակերտների պատրաստությանն ու աշխատանքի պայմաններին, զետեղվում են գործիքների վրա կատարվող վարժություններ (գործիքային մարմնամարզություն), թեթև ատլետիկայի առանձին ձևեր (վորոնք գործադրական վարժությունների բաժնի մեջ չեն մտել) և ոիթմիկ վարժություններ:

Յերրորդ բաժնի նյութերն ընտրելիս նշվում են այն խաղերը, վորոնք կարող են անցկացվել առանձին վարժությունների ուղղությամբ (որինակ՝ մագլցում, սողում) և սպորտ խաղեր:

Բոլոր վարժությունների ընտրության ժամանակ անհրաժեշտ ե նախատեսել նրանց կրկնությունների անհրաժեշտությունը:

Տեսական թեմաները պետք ե մտցնել յերկրորդ և յերրորդ քառորդի դասերից մեկն ու մեկի մեջ՝ տալով յուրաքանչյուր թեմային 18—20 րոպե: Խստիլ արգելվում ե Փիզիկական վարժությունների համար հատկացված ժամերն ոգտագործել սույն ժրագրով չնախատեսված տեսական պարագմունքների համար:

Բացի դրանից, Փիզիկական վարժությունների յուրաքանչյուր նոր խմբի բացատրության ժամանակ, անհրաժեշտ ե ովյալ Փիզիկական վարժության տեխնիկայի, բացատրության հետ միասին՝ համառոտ կերպով բացատրել որգանիզմի համար նրա ունեցած նշանակությունը և նրա կատարման առողջապահական կանոնները:

Պլանում անհրաժեշտ ե նույնական նշել այն ժամանակը, վորությացքում դասաստուն աշակերտներին ուժեղութ յե Փիզկուլտ կազմակերպչական ունակություններով:

Բացի կիսամյա պլանից, դասաստուն, յուրաքանչյուր դասի համար պետք ե ունենա մանրամասն պլան: Դասերի պլանները կազմվում են վոչ ավելի, քան 2, 3 դաս առաջ:

Առաջին դասերն անցնելուն զուգընթաց կազմվում են հաջորդ դասերի պլանները։ Պանում նշվում են՝ դասի նպատակը, ամսաթիվն ու հերթական №-ը, ապա համառոտակի թվարկ-վում են այն վարժությունները, վորոնց միջոցով իրագործվում են տվյալ դասի խնդիրները։ Դասից հետո անհրաժեշտ է նշել պլանի կատարումն ու անցած դասի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, վորպեսզի հաջորդ դասերի պլանը կազմելիս կարելի լինի այդ փոփոխությունները հաշվի առնել։

Հաշվառումը կատարվում է հետևյալ բաժինների վերաբերյալ։

1. Անցած նյութի յուրացման հաշվառում։

2. Աշակերտների կարգապահության և դեպի պարապմունքներն ունեցած վերաբերմունքի հաշվառում։

Ուսումնական նյութի յուրացման հաշվառումը կատարվում է յուրաքանչյուր դասի ժամանակ, և առանձին աշակերտների աշխատանքի արդյունքներն անց են կացվում դասարանական մատյանի մեջ (տես հայելլած № 6)։

Աշակերտների կարգապահության և դեպի պարապմունքներն ունեցած վերաբերմունքի հաշվառման մեջ մտնում են պարապմունքներին հաճախելը, սպորտ-հագուստների առկայությունը, մաքրասիրությունը, կարգապահությունը դասերի ժամանակ և խնայողական վերաբերմունք դեպի սպորտ-ինքնուստարը։

Աշակերտների ֆիզիկական պատրաստությունը գնահատելիս վնական գործոններ են հանդիսանում նորմատիվ ցուցանիշների լրացման ժամանակ յեղած կատարման վորակն ու քանակական արդյունքը։

Կատարման վորակը գնահատելիս նշվում է տվյալ վարժությունը կամ սպորտի ձևի տեխնիկային տիրապետելու ստու-մանը և հաշվի յե առնվում կատարման ձևությունն ու վստահությունը։ Քանակական արդյունքը գնահատելիս հաշվի յե առնվում բարձրությունը, ժամանակն ու հեռավորությունը համապատասխան միավորներով (սանտիմետրերը, վայրկյանները և այլն)։

Քառորդի վերջում մի դաս հատկացվում է արդյունքների հաշվառմանը։

Տեսական գիտելիքների ստուգումն անց է կացվում թեմանցնելուց հետո, Փիզիկական վարժություններին դասին զրույցների ձևով։

Ֆիզկուլտուրային-կազմակերպական ունակությունները հաշվի յեն առնվում առանձին առաջաղթություններով։ որինակ՝ դասարանի հետ անցնել շարքի տարրերը, խաղեր, Փիզկուլտրոպակե, ոգնել դասառութին՝ ղեկավարել ջոկը։

Ուսումնական աշխատանքի պրոցեսում աշակերտների ձեռքբերած ցուցանիշները, վորոնք համապատասխանում են ՅԵՊԱՊ-ի կամ ՊԱՊ-ի (նայած տարիքին) նորմաներին, նրանց համար հաշվի յեն առնվում վորպես կրծքանշանի համար տրված ցուցանիշներ։

Իսկ յեթե աշակերտն ինքնագործ աշխատանքի կարգով ՅԵՊԱՊ-ի կամ ՊԱՊ-ի կրծքանշանի նորմաները տալով՝ իր դասարանին նորմատիվ ցուցանիշը կատարում կամ գերակատարում է, բանի նորմատիվ ցուցանիշը կատարում կամ գերակատարում է ըստ իր հայեցողության Փիզկուլտուրայի դասառում կարող է լրացնել վորպես նորմատիվ ցուցանիշի լրացնելունքը հաշվի առնել վորպես լրացնել տվյալ վարժուցուցում, յեթե աշակերտն իրոք լավ է յուրացըել տվյալ վարժուցուցումը, կամ թե ամբողջ նախապատրաստական նյութն անցնելունը, կամ թե ամբողջ նախապատրաստական նյութն անցնելուց հետո, սպորտական ուսման կարգով, նորմատիվ ցուցանիշի լուց հետո, սպորտական անկախ այն հանգամանքից, թե աշակերտը լրացնել պահանջել, անկախ այն հանգամանքից, թե աշակերտը լրացնել պահանջանի համար համապատասխան քննությունը տվյալները կամ թե վո՞չ։

Այնուամենայնիվ կրծքանշանի կոմպլեքսի նորմաների լրացնումն աշակերտներին չի ազատում ընդհանուր հիմունքներով տեղի ունեցող Փիզկուլտուրայի սիստեմատիկ ուսումնական աշխատանքից։

Ուսումնական տարին անհրաժեշտ է ավարտել Փիզկուլտուրնակատարությամբ, վորը հմտորեն կազմակերպելու և անցկացնելու դեպքում հանդիսանալու յե տարպան ընթացքում դըմուկացնելու դեպքում կատարած Փիզկուլտ աշխատանքի մասսայական հաշվառման և ցուցադրման լավագույն ձևերից մեկը։

Հավելված 2

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԴԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ֆիզիկական վարժությունների դասերը կազմվում են միասնական պլանով, վորով իրազործվում են որպանիզմի բազմակողմանի մարզումը, յուրացվում են գործադրական ուսմակությունները և կատարելագործվում են սպորտային տեխնիկան։

Առաջին մասը՝ ներդրավող (5 րոպե) :

Յերկրորդ մասը՝ ընդհանուր նախապատրաստական (10—15 րոպե) :

Յերրորդ մասը՝ հիմնական (20—25 րոպե) :

Չորրորդ մասը՝ յեղրավակիչը :

Դասը տևում է 45—50 րոպե :

Դասի առաջին մասն առահովում է կոլեկտիվի կազմակերպումն ու նպաստում և աշակերտների մեջ աշխուժ տրամադրություն առաջ բերելուն :

Իրեն վարժություններ կիրառվում են՝ շարքի, քայլելու, վաղեվաղքի տարրերը, կարճատե խաղեր (գնդակի պասոսվկա) և այլ վարժություններ : Բոլոր դասարաններում մտցվում և դասարանի որապահի կողմից Փիզիկուլուրայի դասատուին տրվող գեկույց՝ դասարանի պատրաստ լինելու մասին (տես № 5 հաշվելվածը) :

Յերկրորդ մասի գլխավոր խնդիրն են՝ դարդացնել ամբողջ որդանիզմը, մշակել կանոնավոր կեցվածք, կատարելագործել շարժումների ճշտությունն ու ոիթմը, կողմնորոշվելը և արագաշարժությունը, աշակերտների մեջ առաջ բերել իրենց շարժումներին գիտակցորեն տիրապետելու ունակություն :

Այդ խնդիրը լուծելու նպատակով կիրառվում են ժարմնի առանձին մասերի կամ այդ մասերի զուգորդմամբ տարրական և բարդ շարժումներ՝ վարժություններ մեղքովներով, մարդարակայտերով, ցատկապարաններով, կամ թե գործիքների—շվելական պատի, շվերական նստարանի, հալասարակշության գերանի, բումի և այլնի վրա : Դասի այդ նույն մասի մեջ կարող են մտնել այն վարժությունները, վորոնք նպաստում են գործադրական ունակություններին լավագույն կերպով տիրապետելուն :

Դասի յերրորդ մասի խնդիրն են՝ գործադրական վարժությունների և սպորտի առանձին ձևերի վերաբերյալ աշակերտների կողմից կատարվող ուսումնասիրությունը, մարզումը և նրանցում կատարելագործվելը, ինչպես և իրենց յուրացրած գործադրական ունակությունները բարդ (բնական և արհետառական) պայմաններում կիրառելը :

Դասի չորրորդ մասի խնդիրն ե՝ որպանիզմը հանգիստ վեճակի բերելը :

5, 6 և 7-րդ դասարանների դասերի ժամանակ անհրաժեշտ ե բավականաչափ ժամանակ հատկացնել խաղերին, իսկ 8—10 դասարաններում՝ սպորտի ձևերին :

Կարող են զգալի թվով դասի վարիանտներ լինել. սակայն դրանք բոլորն ել կազմվում են մեկ միասնական պլանով : Այսպես, կարելի յե դասն անցկացնել շեշտը նորմատիվ ցուցանիշների համար կատարվող մարզման վրա դնելով, շեշտը թեթևադատիկայի սպորտային ձևերի վրա դնելով, շեշտը դործիքատական մարզման արզության վրա դնելով, շեշտը իուզընդուների հաղթահարելու վրա դնելով, դահուկների դաս և այլ վարիանտներ անցկացնելով :

Դասը նախապատրաստելիս չպետք ե շատ նոր նյութ մտցընել : Պետք ե արդեն մշակված նյութն ոգտագործել զանազան վարիանտներով՝ ուշադրություն դարձնելով վարակական և քանակական արդյունքի վրա :

Դասն անցկացնելու ժամանակ պարագաներ պայման և համարվում սահմանադրական-առողջապահական պահանջների խիստ պահպանումը :

Դասը կազմելիս պետք ե առաջնորդվել այն կանոնով, վործիչը շարժումներ պահանջող վարժությունները (նետում, համապատակակշռություն) տեղի ունենան ուժեղ ընույթի վարժութական կամ առաջին վարժություններն իրենց հերթին տեղի ունենան այն վարժություններից առաջ, իսկ ուժային վարժություններն իրենց հերթին տեղի ունենան այն վարժություններից առաջ, վորոնք առաջ են բերում արյան շրջանառության և չնչառության ուժեղ գործունեյթյուն (վազք, ցատկումներ) :

Սակայն արդեն ձեռք բերված օւնակությունները բարդ պայմաններում կիրառելիս վարժությունների հետեղականությունը կարող է փոխվել. որինակ, վազքից կամ ցատկումից հետո դաստուն կարող է տալ հավասարակշռության կամ նետման վարժություն և այլն :

